№ 218 ԿԻՐԱԿԻ, 3 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 3 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 218

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԹԱՏՐՕՆ „ՄՕԴԷՐՆ“
(Ռիչչիի շինութեան մէջ)

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ից, շքեղ նկարներից բացի, կը սկսվեն ԱՒՍԷԴՕՐԱ ԴՈՒՆԿԱՆԻՆ հետևող՝ յայտնի բոկոտն-պարուհի

Մարիամ Արմէնիա

—ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ—
Կլասիք պարեր կատարող։

Մարիամ Արմէնիան յայտնի է ամբողջ Ռուսաստանում և կոփկաս է ժամանում ԱՌԱՋԻՆ ԱՆԴԱՄ։
ԳՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԵՆ

Բոկոտն-պարուհի ՄԱՐԻԱՄ ԱՐՄԷՆԻՍԸ կատարում է հնադարեան պարեր։ Բոլոր պարերը կատարվում են մերկ ոտներով։ Սեփական դէկօրացիա։ Համապատասխան զգեստների մեծ փոփոխութիւն։ Բազմաթիւ գովասանքներ մամուլի կողմից։ Ծանկացողներին յոյց կը տրվեն այդ գովասանական յօդուածները մեր գրասենեակում։

Այսօր, սկիզբը ցերեկվայ ժամը 12-ից,
ՎԵՐՋԻՆ ԳԱՍՏՐՕԼԸ ՖՐԻՕ ՎԱՍԿՕՅԻ
Օրիգինալ էկվիլիբրիստներ

ՄՇԱԿ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
3 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ.
Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թուրքիա՝ 120 ղրուշ։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակագրոշմով)։

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երես ի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Եսայի Տէր-Բարսեղեան Աբովեանցը իր ընտանիքով յայտնում է իր բարեկամներին և ժողովրդին, որ այսօր, կիրակի, հոկտեմբերի 3-ին, կատարվելու է իր եղբօր՝ հանգուցեալ

ՆԵՐՍԷՍ աւագ-քահանայ ԱԲՈՎԵԱՆՑԻ

մահվան տարեդարձի առիթով Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցում ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ։ Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամը 10½-ին, իսկ հոգեհանդիսաը ժ. 12-ին։
1145. 1—1



ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ Ա. ՌԵԻՏԵՐԻ ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

ՄԱՆԿԱԿԱՆ ԿԱԹՆԱԼԻՒՐ
ԱԼՊԻՆԱ
Լօզաննա (Շվէյցարիա)
Կայսրոյ դրոշմ եւ գլխ. ներկ. սուորագրութիւնը՝
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԷՆՑԷԼ
Ս. Պետերբուրգ, Գօրոխովայա 33.
Դեղատներում և դեղավաճ. խանութներում։
1147. 1—1

ԴԱՇՆԱԿԱՀԱՐ

ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

(Կ.) առ. Ելիզավէտինսկայա, № 40. 985. 20—12

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ եւ ԿՕՄ.“ ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Պետերբուրգի „ՍԻՄԷՆՍ եւ ԳԱԼՍԿԷ“ ռուսական էլեքտրօ-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բերլինի „ՍԻՄԷՆՍ եւ ԳԱԼՍԿԷ“ ակց. ընկ., Բերլինի „ՍԻՄԷՆՍ ՇՈՒՍԿԷՐՏ-ԶԷՐՆԻ“ ակց. ընկ., Կոլօնիի մեքենագործական ընկ. եւ Ֆրանս. „ԿՐՕՍԼԷՅ“ անգլիական գործարանի ներկայացուցիչներ։

ՁԱՓՄԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — ՀՈՍԱՆՔԱՁԱՓ, ամպէրմէտրներ, վոլտմէտրներ և ամեն տեսակ հաշվեցույց ապարատներ փոփոխվող և մշտական հոսանքի համար։

ԷԼԵՔՏՐՕ-ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — „ՐԵՆՏԳԷՆ“ ապարատներ բոլոր տատանելիքներով։ Միաւորող ապարատներ՝ ԿՌՈՒՍՏԻԿի, ԳԱԼՎԱՆԻԶԱՑՈՒԱՑԻ, ԷԼԵՔՏՐՕԼԻԶԱՑԻ, ֆարադիզացիայի համար, եւ այլն։

ԱՎՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Ավտոմօբիլներ «ՊՐՕՏՕՆ», էլեքտրաշարժ և բենզինաշարժ։ „Մոտորնի մակոյկներ“։ Ավտոմօբիլային պահանջելիքներ։

ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Ջերմային շարժիչներ „ԴԻԶԷԼԻ“ — հում նաֆթի, մազութի համար և այլն, միանգամայն ձեռնտու։ Գոպային շարժիչներ «ԳՈՒԼԴՆԵՐԻ»։ Նաֆթային, կէրոսինային, գազային շարժիչներ „ՆՐՕՍԼԷՅԻ“։

ՊԱՀԵՍՏՈՒՄ կան՝ դինամօ-մեքենաներ, էլեքտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղէններ էլեքտրական կառուցուածքների համար և այլն։

ՊՐԷՅՏ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ և ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են ըստ առաջին պահանջման։
Տէլէֆօն № 533. Հասցէն հեռագիրների համար՝ Шукертъ, Тифлисъ.
№ 2. (Կ.) (առ.) 433. 26—13

Թիֆլիսի Ժողովարան

(Զմեռային շինութիւն)

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹՆԵՐ

ԵՐԵՔՇԱԲԹԻ օրերը՝ լարանուագ խումբ, սազանդար և ՊԱՐԵՐ։
ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը՝ լարանուագ խումբ։
ՇԱԲԱԹ օրերը՝ սազանդար։
ԿԻՐԱԿԻ օրերը՝ սինեմատօգրաֆ։

Հիւրերը մուտքի համար վճարում են՝ անդամների յանձնարարութեամբ՝ երեքշաբթի օրերը—1 ռուբլի, իսկ հինգշաբթի, շաբաթ և կիրակի օրերը—50 կոպէկ։

Երեկոյթների սկիզբը ժամը 8½-ին։

ԻԶԷՔ ԳԱՒԱՌՆԵՐԸ

—

Դեռ հանգուցեալ Գրիգոր Արծրունին քարոզում էր այն միտքը, որ հայոց պատրիարքը և ազգային երեսփոխական ժողովը պէտք է տեղափոխվեն և իրանց գործունէութիւնը հաստատեն բուն Հայաստանի մէջ, Էջմիածնում կամ մի այլ տեղ։

Եթէ ժամանակի ընթացքում անյարմար կամ անհնարին եղաւ այդ միտքն իրագործել, պէտք էր գոնէ իրագործել մի այլ առաջարկ, որ վաղուց անվում է, այն է՝ որ Կ. Պոլսի հայոց պատրիարքը և ազգային կենտրոնական վարչութեան (քաղաքական ժողովի) անդամները այցելին Հայաստանը և անձամբ, անմիջապէս ծանօթանան ժողովրդի դրութեան հետ։

Գուցէ Աբդիւլ-Համիդի օրով անհնարին էր իրագործել այդ միտքը, բայց այժմ, երբ Թիւրքիայում ազատ շրջագայութիւն է, պատրիարքի այցելութիւնը իր ժողովրդին չէ կարող որևէ խոչընդոտի հանդիպել։ Ուստի և Կ. Պոլսի հայ մամուլի մէջ երևցած այն լուրը, թէ այժմեան պատրիարք Դուրեան արքեպիսկոպոսը մտադիր է ճանապարհորդութիւն կատարել Հայաստան, պէտք է խրախուսել և ողջունել, իբրև առաջին քայլ՝ ի մօտոյ ծանօթանալու հայ ժողովրդի իսկական դրութեան, կարիքների և պահանջների հետ։

Այդ ծանօթութիւնը մենք անհրաժեշտ ենք գտնում ոչ միայն այն նկատումով, որ հովիւը պէտք է ծանօթանայ իր հօտի կարիքների և վիճակի հետ, այլ, ընդունելով պատրիարքին իբրև ազգային կենտրոնական վարչութեան պետ, այդ ծանօթութիւնը պէտք է ծառայէ իբրև հիմն այն ընդհանուր ծրագրի, որ պէտք է մշակվի Հայաստանում մտցնելի մի շարք բարեփոխութիւնների համար։

Զէ՞ որ ժամանակ է, որ Կ. Պոլսի պատրիարքարանը և ազգային ժողովը իրանց ամբողջ ուշադրութիւնը ամփոփեն և կենտրոնացնեն Հայաստանի ժողովրդի վրա։

Հայ ժողովուրդը զուրկ է տարրական, միջնակարգ և գիւղատնտեսական, արհեստագործական դպրոցներից, հայ գիւղացին չունի ոչ մի նեցուկ իր հողագործական աշխատութիւնների համար. չը կան գիւղական բանկեր, հողային, փոխառու բանկեր, չը կան կօօպերատիվ ընկերութիւններ, խնայողական, սպառողական դրամարկղեր. չը կան ընթերցարաններ, գրադարաններ. չը կան տնայնագործական հաստատութիւններ, գործարաններ։ Ի հարկէ այդ հաստատութիւններից շատերը վերաբերում են պետական ձեռնհասութեան, պետութիւնն է պարտաւոր հիմնել հողային բանկեր, խնայողական կասսաներ, ստեղծել հասարակական աշխատանքներ, բայց ազգային կրթութեան լուսաւորութեան գործով պէտք է առանձնապէս զբաղվի ազգային վարչութիւնը։

Եւ ահա այդպիսի մի գործունէութեան համար պէտք է նախօրօք մշակել ծրագիր, հիմնված տեղական պայմանների և կարիքների վրա. իսկ այդ ծրագիրը մշակելուց առաջ պէտք է ի մօտոյ ծանօթանալ ժողովրդի և երկրի դրութեան կարիքների հետ։

Ժամանակ է, որ պատրիարքարանը և ազգային կենտրոնական վարչութիւնը իջնեն դէպի գաւառները և իրանց գործունէութեան ելակէտ շինեն Հայաստանի ժողովրդի կարիքներին և պահանջներին գոհացում տալը։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պետերբուրգ, 1 հոկտեմբերի

Կօպենհագէնի դեսպան իշխան Կուտաշեվը նշանակվեց դեսպան Բրիւսելում։ (Հ. Գ.)

Ռեվէլ, 1 հոկտեմբերի

Երեկոյեան ժամը 8-ին նահանգապետի ժամ կայացաւ ճաշ 80 հոգու համար։ Նահանգապետն առաջարկեց Մեծ Իշխանի կենացը։ Կայարանում Մեծ Իշխանին ճանապարհ դրին կառավարիչ անձեր, ազնուականութիւնը և քաղաքի ներկայացուցիչները։ Մեծ Իշխանը ողորմածաբար զրուցեց ներկայ եղողների հետ։ Գնացքը մեկնեց ժամը 12½-ին ուրաների բացագանչութիւններով։ (Հ. Գ.)

—

Օդեսսա, 1 հոկտեմբերի

Ֆինանսների, առևտրի, ներքին գործերի և ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնների ներկայացուցիչների և հիւպատոսների ներկայութեամբ բացվեց առաջին հարաւ-ռուսական առևտրա-արդիւնաբերական համագումարը։ Մասնակցում են 50 առևտրա-արդիւնաբերական կազմակերպութիւնների 200 պատգամաւորներ։ Նախագահ ընտրվեց Միխայիլ Միխայլովիչ Ֆէօդորով։ Համագումարը հեռագրով առևտրի մինիստրից խնդրեց առ ոտս Թագաւոր Կայսրի արքունի անսահման հպատակութեան և սիրոյ զգացմունքներ։ Ստացվել են հարիւրից աւելի ողջոյններ։ Կարդացվելու են 45 զեկուցագրեր։ (Հ. Գ.)

—

Բեռլին, 1 հոկտեմբերի

Համալսարանի յօբելեանի առիթով ամբոցում կայացաւ պաշտօնական հացկերոյթ։ Ներկայ էին թագաւորական զոյգը, կրօնպրինցը կնոջ հետ, պրինցները, բարձրաստիճան պաշտօնեաներ, պրոֆեսօրներ և արտասահմանեան պատգամաւորութիւնները, նաև ընտրեալ ուսանողներ։ Ճաշից յետոյ նոցին մեծութիւնները զրուցեցին գերմանացի և օտարազգի գիտնականների հետ։

Մամուլը քննադատում է Էրլենտալի հանդէս գալը համակրանքով, բայց զրպարված։ «Պոստը» զարմանում է, թէ ինչո՞ւ Գերմանիայի մասին չը յիշատակվեց առանձին։ Միւս լրագիրները 1866 թ. պատերազմի մասին արած յիշատակութիւնը գտնում են անտեղի։ (Հ. Գ.)

—

Համբուրգ, 1 հոկտեմբերի

Բանակցութիւնները յանգեցին համաձայնութեան՝ գլխաւոր կէտերի նկատմամբ՝ բանւորների և տէրերի միջև։ Ցոյս կայ, որ շարաթ օրը կը լուծվեն բոլոր վիճելի հարցերը։ (Հ. Գ.)

—

Ֆրիդբերգ, 1 հոկտեմբերի

Եկաւ պրինց Հէնրիխը։ (Հ. Գ.)

—

Տուլօն, 1 հոկտեմբերի

Ռուսաց էսկադրան մեկնեց Սպանիա, ուր մի քանի օր կը մնայ Վիգօյում։ (Հ. Գ.)

—

Աթէնք, 1 հոկտեմբերի

Եկաւ հելլէնների թագուհին։

Ճգնաժամը շարունակվում է. թագաւորը առանձին-առանձին կընդունէ պալատի նախագահին և կուսակցութեան պարագլուխներին։ (Հ. Գ.)

—

Պէկին, 1 հոկտեմբերի

Բացվող սահմանադրական պալատում 262 պատգամաւորներ են, որոնց մեծամասնութիւնը կառավարութեան կողմն է։ Պալատը ներկայացնում է խորհրդակցական հաստատութիւն. նրա վճիռները կառավարութեան համար պարտաւորեցուցիչ չեն։ Պալատը քննելու է պետական եկամուտը, հարկերը, փոխառութիւնները, նոր օրինագծերը։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—Պուբլիցիստը այցելեց իր «զեմլեակ»՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստր՝ Կասսօյին, բայց չընդունվեց։

Լուրերին նայած, սինոդի օբէր-պրօկուրոր Լուկեանովը հեռանում է իր պաշտօնից. նրա տեղ նշանակվելու է Սաբլէրը։

«Б. Вѣд.»-ի աշխատակցի հետ խօսակցելիս, Միլիւկովը այն կարծիքը յայտնեց, որ երբորդ Դուման ոչ մի նոր բան տալ չէ կարող։ Հոկտեմբերեանների վերջին բլոկները աջակողմեանների հետ հաւանօրէն կը պահպանվեն ժողովրդական լուսաւորութեան օրինագիծը քննելու ժամանակ. կադէտները հանդէս կը գան ի պաշտպանութիւն օտարացեղ դպրոցի։ («Б.»)

—

Պարիզի լրագիրներից մի քանիսին հեռագրում են Տանժէրից, որ մօտիկ ապագայում այնտեղ լուրջ դէպքեր են սպասվում։ Մարոկկոյի յարաբերութիւնները Սպանիայի հետ, վերջինիս չափազանց մեծ պահանջների պատճառով, շատ են վատացել։ Ասում են, որ Սպանիան, բացի պատերազմական տուգանքները տալուց, Մարոկկոյից պահանջում է դարձեալ վճարել բոլոր նախկին պատերազմների տուգանքները և որ պահանջվող դումարի քանակը հասցնում է մօտ հարիւր միլիոնի. բացի դրանից, Սպանիան մտադիր է գրաւել Տէտուանը, Անջէրասը և ամբողջ Ռիֆի երկիրը, որ համարվում է վերջին պատերազմի թատերաբեմը։ Ռիֆում իբր մտադիր է նա նաւահանգիստներ կառուցանել, երկաթուղիներ անցկացնել և կառավարել երկիրը, թողնելով սուլթանին անուանական իշխանութիւնը։ Մարոկկօն մտադրութիւն չէ ցոյց տալիս զիջել և մեծ յոյսեր է դնում Ֆրանսիայի միջամտութեան վրա։ Այս րոպէին, կարծես օր, այդ առիթով վարում են բանակցութիւններ։ Ֆէցի ֆրանսիական դեսպանը, որ նորերս վերադարձաւ հայրենիքից, շտապով կանչվել է Ֆրանսիա։ Տանժէրի ֆրանսիական դեսպան Բէնիօն այս օրերս նոյնպէս մեկնում է Պարիզ։

—

Ա թ է ն ք.—Համալսարանում ուսանողները արգելեցին նոր պրոֆէսօրներին դասախօսութիւն կարդալ։

ԵՐԿԱԹՈՂԱՑԻՆ ԲԱՆՒՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

—

Պարիզ, 1 հոկտեմբերի

Բրիանը յայտնեց մունիցիպալ խորհրդին, որ Պարիզի ուսելիքը ապահովված է, մսի շուկաները գործում են նորմալ։ Օսցիալիստ պատգամաւորները գանգատվում են կառավարութեան ձեռնարկութիւններից և պահանջում են անյապաղ գումարել պարլամենտը։ Ձերբակալվեց գործադուլի 6-րդ ղեկավարը։ Սպասվում են նոր ձերբակալութիւններ։ Պարիզ - Լիոն-Միջերկրական-ծով գծի վրա յայտարարված գործադուլը չիրականացաւ. Հարաւային գծի վրա երթևեկութիւնը կանգ է առել միայն մասնակի կերպով։ Ընդհանուր տպաւորութիւնն այն է, որ երկաթուղային ընդհանուր գործադուլը կարող է անպտղի համարվել։ Էլեքտրական կայարանների ծառայողների գործադուլը սկսվեց։ Մեծ ճեմելիքների մի մասը մթութեան մէջ է։ Նացիոնալ սինդիկատի գեներալ-քարտուղարը և մի պարագլուխ կալանաւորվեցին։

Բրիանը խորհրդակցեց արդարադատութեան մինիստրի և դատախազի հետ՝ գործադուլի պատճառ եղողներին անմիջապէս պատժելու մասին, յետոյ տեսակցեց երկաթուղային վարչութիւնների կառավարիչների հետ, որոնք յայտնեցին, թէ Արևելեան, Օրլէանի, Պարիզ-Լիոն-Միջերկրական-ծով գծերի երթևեկութիւնը համարեա նորմալ է, Հիւսիսային գծի վրա երթևեկութիւնը կարգի է ընկնում։ Կառավարիչները համաձայնեցին Բրիանի միջոցով բանակցութիւն սկսել ծառայողների հետ։

Հրամանագրվեց ձերբակալելու Պաուոյին։ Կէսօրից յետոյ կտրավեցին ներքին գործերի մինիսարութիւնը ոստիկանութեան հետ միացնող հեռախօսաթելերը։ Պարիզի զօրքը ուժեղացաւ հեծելազօրով և հետևակով։ Պարիզ-Բրիւսել երկաթուղային գիծը երէկ ե-ռեկոյեան վերականգնվեց։ Դրութիւնը ըստ երևոյթին դէպի լաւն է գնում։ Օրլէանի գծի գործադուլաւորները աշխատանքի կան։

Կառավարութիւնը ձեռք առաւ զինուորական և ոստիկանական լայն միջոցներ, որպէսզի այսօրվայ միտինգը չը վերջանայ անկարգութիւններով և բռնութիւններով։

Երեկոյեան դադարեց էլեքտրական լուսաւորութիւնը բուլվարներում, պալատում, ներքին գործերի մինիսարութեան մէջ, մի քանի թատրոններում։ Շատ խանութներ փակ են։ Սրճարաններում ուրիշ լոյս են գործածում։ Ձերբակալվեցին դարձեալ մի քանի բանւորներ։ Գիշերը Բէրրի փողոցում պայթեց մի ռումբ. մարդկային զոհեր չը կան։ Բօրդոյում որոշեցին գործադուլ անել Հարաւային երկաթուղագծի ծառայողները։

Մինիսրների խորհրդում Միլիրէանը յայտնեց, որ զինուորական ծառայութեան կանչված երկաթուղային ծառայողները պէտք է անյապաղ ներկայանան՝ բանտ նստելուց խուսափելու համար։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՈԿԱՍՏԱՆ

Կ. Պոլիս, 1 հոկտեմբերի

Ֆրանսիական խմբակը փոխառութեան մասին բանակցութիւններ է վարում օսմանեան բանկի հետ։ Թիւրքիան ընդունում է ֆրանսիական կառավարութեան պայմանները։ Ֆրանսիացի մի ֆինանսիստ ղեկավարելու է Թիւրքաց կօնտրոլի պալատը։

«Թանինը» ժամանակում է, որ Վէնիզէլոսին Աթէնքի կաբինէտի պարագլուխ նշանակելը Թիւրքիան ընդունում է իբրև ժարտակոչ և ընդհատում է դիպլոմատիական յարաբերութիւնները Յունաստանի հետ։

Գաուրանից հեռագրում են. «Շէբի գրաւումից յետոյ դրուզները յետ նահանջեցին անապատը, ուր տեղի կունենայ վճռական ճակատամարտ։ Շէբում թողնված է թիւրքական զօրախումբ։ Դրուզներին հետապնդող զօրքերը չրի պակասութիւն են զգում։

(Հ. Գ.)

—

Պարիզ, 1 հոկտեմբերի

Գործակալութեանս թղթակցին բացատրեցին, որ Թիւրքաց և Ֆրանսիական կառավարութիւնների բանակցութիւնները փոխառութեան մասին յանգեցին համաձայնութեան գլխաւոր հարցերի վերաբերութեամբ, մնում են մանրամասնութիւնները։ Սակայն լիակատար վստահութիւն չը կայ, թէ փոխառութիւնը կը կնքվի հէնց այն ֆինանսական խմբակի հետ, որի հետ վարվում են բանակցութիւնները։

(Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 1 հոկտեմբերի

Սալոնիկի երկաթուղագծի վրա, Թուժանովի մօտերը, պայթեց մի ռումբ։ Զարգվեցին 4 վագոններ, վիրաւորվեց մի ծառայող։ Մահափորձը պատրաստվում էր Ալբանիայի զօրքերի հրամանատար Տուրդուլ փաշայի դէմ, որ անցաւ յետոյ։ (Հ. Գ.)

—

Սոֆիա, 1 հոկտեմբերի

96 բուլգարներ Մակեդոնիայից փախան Բուլգարիա։ Կրատովի կազայի երկու գիւղացիներ եկան Կիւստէնդիլ և դիմեցին հեռագրով մեծ վեզիրին ու բողոքեցին ժանդարմների և զօրքերի ճնշումների դէմ։ (Հ. Գ.)

—

Ուրմիա, 1 հոկտեմբերի

Սուլդուզից հաղորդում են 330 ասկէրների գալստեան մասին, որոնցից 130-ը տեղաւորվեցին Բանդէգնա գիւղում, 200-ը՝ Նագադէկում։ Գիշերս քիւրդերը հրդեհեցին 4 գիւղեր։ Սարբազների մի մասը փախաւ քաղաք։ Քիւրդերի դէմ ուղարկվում է ուժեղ զօրամաս։ Քիւրդերը յետ նահանջեցին իրանց գրաւած մօտակայ գիւղերը, ուր կայ ապահովութիւն։ (Հ. Գ.)

—

Լ օ ն դ օ ն.—Անգլիան ոչ մի նշանակութիւն չէ տալիս այն լուրերին, որ Թիւրքիան փոխառութիւն է կնքել Գերմանիայում։

—

Կ. Պ օ լ ի ս.—Ցարաբերութիւնները Թիւրքիայի և Յունաստանի միջև լաւացան. այդ երևում է նրանից, որ Շէվքէթ փաշան այցելութեան եկաւ յունաց պատրիարքի մօտ։

ՄՐՐԻԿ ԵՒ ՆԱՒԱԲԵԿՈՒԹԻՒՆ

Պ ե տ ե ր բ ո ւ ր գ.—Գիշերս Բալտիկ ծովի ափին եղաւ ուժեղ փոթորիկ։ Բիգայից հաղորդում են. «Ծովային փոթորիկը անագին աւերածութիւններ գործեց. բազմաթիւ ծառեր կոտրվեցին, տանիքներ պոկվեցին, հեռագրական սիւներ շրջվեցին. ափ նետվեցին երեք առագաստային նաւեր. նաւաստիների մի մասը խեղդվեց. «Էդուարդ» նաւից ազատվեցին երեք հոգի, մնացածների վիճակը յայտնի չէ։ Ծովը ցամաք է նետում շատ փայտ, տակառներ նաւթով, արկղներ. ծովասոյզ եղած նաւերի թիւը ըստ երևոյթին մեծ է»։ Տրվիցից. «Գիշերս կայծակի և գոռոցի հետ սկսվեց մրրիկը, որ գործեց մեծ աւերածութիւններ»։ Միտավայից. «Գիշերս ուրագանը փչացրեց հեռագիրը. շատ ուրիշ դժբաղդութիւններ գործեց»։ (Հ. Գ.)

—

Վ ի ն դ ա վ ա.—Փոթորիկը անտառում տապալեց շատ ծառեր, փչացրեց հացի պահեստներ. անգլիական «Դիտապարէ» նաւը յետ եկաւ, կորցնելով մի նաւաստի և ապրանքի մի մասը։ (Հ. Գ.)

—

Բ ե ր լ ի ն.—Երէկվայ փոթորիկի ժամանակ Բալտիական և Գերմանական ծովերի վրա շատ նաւեր խորտակվեցին։ (Հ. Գ)

—

Հ ա ւ ա ն ն ա. — Ուրագանը կործանեց Կոգիլդա և Սանտա Կլարա քաղաքները. բազմաթիւ մարդիկ զոհվեցին։ (Հ. Գ.)

—

Ս ե ն Ն ա զ է ր.—Նուար-Մօնտիէ կղզու մօտ խորտակվեց «Վիլտշէֆօր» շոգենաւը. խեղդվեցին 23 մարդ։ (Հ. Գ.)

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՊՕՐՏՈՒԳԱԼԻԱՅՈՒՄ

Արտաքսեանան լրագիրները հետաքրքրական փաստեր են հաղորդում հանրապետական հոսանքների աճման մասին Պորտուգալիայում։

Մանուէլ թագաւորը վերջերս երկիւղ էր կրում բռնկումից հանրապետականների կողմից և աշխատում էր իր կողմը գրաւել նրանց, սակայն շրջապատողները և մայրթագուհին պնդում էին ամուր քաղաքականութեան վրա։

Դինաստիան ազատելու համար թագաւորին խորհուրդ տուեցին պսակվել, բայց շատ դժուար էր կին գտնել թագաւորի համար։ Կոնտաուտ Պատրիցիա պրինցեսին, որի հետ ուզում էր պսակվել թագաւորը, հրաժարվեց կաթոլիկ դաւանութիւնն ընդունելուց, նոյնպէս չէր վստահանում թագաւորին մարդու գնալ Վիլհելմ կայսրի դուստրներից ոչ մէկը։

Այդպիսով՝ թագաւորին չաջողվեց մի զօրեղ պետութեան աջակցութիւնն ունենալ. իսկ հանրապետական գաղափարների պրոպագանդան աւելի մեծ աջողութեամբ էր առաջ գնում նրա համար, որ պօրտուգալական հանրապետականները սպանականների հետ քարոզում էին, որ պէտք է Պօրտուգալիան և Սպանիան միացնելով կազմել Իբէրիական հանրապետութիւն քաղաքային և գաւառական լայն ինքնավարութեամբ։ Հանրապետականները աւելի ևս հեռու էին գնում և քարոզում էին հանրապետութիւնների դաշնակցութիւն։ Այդ գաղափարները մեծ ընդունելութիւն գտան ազգաբնակութեան շրջանում, որովհետև ժողովրդին համոզում էին, որ հանրապետութիւնը կը փրկէ նրան մուրացկանութիւնից և Անգլիայի տիրապետութիւնից։

Մանաւանդ հանրապետական պրոպագանդայով յափշտակվել է զօրքը, որը երպում է վերականգնել Սպանիայի և Պօրտուգալիայի նախկին փառքը։

—

Մ ա դ բ ի դ.—Զիբրալտարում ձերբակալվեց մի պօրտուգալացի, որին կասկածում էին նրանում, որ նա կամենում էր սպանել փախած Մանուէլ թագաւորին։ Լիսաբօնի գաղտնի ոստիկանութեան պետ Բօլէսը այդ առիթով մեկնեց Զիբրալտար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՐԱՑ ԲԵՄԻ ԱՐԺԱՆԱՒՈՐ ՄՇԱԿՆԵՐԻՑ ՄԷԿԻ ՅՕԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Վրաց բեմի զարդերից մէկն է Մարիա Սափարօվա-Աբաշիձէն, որի բեմական գործունէութեան 35-ամեակը լրանալու առիթով, վրաց հասարակութիւնը մօտ ապագայում կատարելու է շնորհալի դերասանուհու յօբելեանը։

Ի բաց առեալ այն, որ յարգելի յօբելեարուհին վրաց բեմի առաջնակարգ ուժ կարող այժերից մէկն է, մեզ հայերիս համար հետաքրքրական է նրա անձնաւորութիւնը նրանով ևս, որ նա ազգով հայ է, թէպետ գաւառի վիրահոս հայ գիւղերից մէկի ծնունդ։

Մարիա Սափարօվան ամուսինն է վրաց բեմի շնորհալի կատակերգու դերասան Վասո Աբաշիձէի և մայրը՝ նոյնպէս ընդունակ դերասանուհի Անաստասիա (Տասո) Աբաշիձէի։ Այսպիսով՝ հայրը, մայրը և միակ դուստրը՝ վրաց բեմի զարդերն են կազմում։ Եթէ սրան աւելացնենք և այն, որ Մ. Սափարօվա-Աբաշիձէի եղբայրն էլ դերասան է, պատկերը կատարեալ կը լինի։

Թէև յօբելեարուհին վերջին տարիներս, լսելիքի տկարութեան պատճառով, թողել է վրաց բեմը, բայց երբեմն առ երբեմն չէ զլանում ներկայացումներին մասնակցել։

Նրա ամպլուան գլխաւորապէս բաղկանում է տեղական հայ և վրացի կանանց տիպերի անմահօրէն կենդանագրումից, և համարձակ կերպով կարելի է ասել, որ նմանը չունի վրաց դերասանական ընտանիքի շրջանում։

Առաւելապէս աջողվում է նրան Գ. Սունդուկեանի պիէսների մէջ դուրս բերված կանանց տիպերի ամբողջացումը, որով շատ ու շատ կողմերով բարձր է կանգնած հանգուցեալ դերասանուհի Ն. Մ. Գարունիա-Ցագարելիից. վերոյիշեալ դրամատուրգի կենդանագրած կանանց տիպերի հարազատօրէն պատկերացնելու գործում։

Երախտապարտ վրաց հասարակութեան հետ միասին, հայ ժողովուրդն էլ անշուշտ իր բարոյական պարտքը կը համարի ըստ արժանւոյն գնահատել իր ազգակցի 35-ամեայ բեղմնաւոր աշխատանքը, ապահովելով նրան նիւթապէս ծերութեան համակում։ Դա նրա պարտքն է, սեպուհ պարտականութիւնը։ Յար. Գասպարեան

ԻՍ. ԹԱԴԷՈՍԵԱՆԻ ՄԱՐՄԻՆԸ ՇՈՒՇՈՒՄ

Շուշի, 25 սեպտեմբերի

Այսօր հեռագիրը գուժեց Շուշեցի Ի. Թադէոսեանի մահը Բագում։ Այստեղ բոլորը մի տեսակ ցաւ զգացին։ Ես չը կարողացայ հասկանալ թէ ով է այդ հանգուցեալը, որի մահվան լուրը այդքան ցաւ սկսեց պատճառել։ Պարզվեց, որ հանգուցեալը պատկանելիս է եղել այն բարեգործների թիւին, որը առաջնորդվել է «աջ ձեռքով տալիս ձախը չը պիտի իմանայ» նշանաբանով։

Հանգուցեալը ահա քանի տարի է տեղիս «Վերին Թաղի» եկեղեցու բակում իր սեփական միջոցով եկեղ.-ծխ. դպրոց է պահում «Ի. Թադէոսեան» անունով, ուր ձրիաբար սովորում են երկսեռ մանուկներ։

Հանգուցեալ Թադէոսեանը այդ ուսումնարանը օրինաւոր ճանապարհով ապահովել է 30,000 բուբլով, որի % ը բաւարարում է դպրոցական ծախքը։

Բացի այդ՝ տեղիս թեմական դպրոցում և այլ պետական ուսումնարաններում իւրաքանչիւր տարի 50 աշակերտ և աշակերտուհիների թոշակը և ծախսերը իր ուսերի վրա առած երկար տարիներ տանում է։

Հանգուցեալի մահվան լուրը գլխաւորապէս ազդեց քաղաքիս չքաւոր դասի վրա, որոնց օգնութեան էր հասնում հանգուցեալը ամեն տեսակ աղէտի և աղքատութեան ժամանակ և ասն օրերին։

Ի. Թադէոսեան բաւական հարուստ է և Բագումում ունի նշանաւոր կարողութիւն։

Շուշու հասարակութիւնը եկեղեցիներում անմիջապէս հոգեհանգիստներ կատարեց։ Հոգեհանգստից յետոյ ժողովները տեղի ունեցան և վճռվեց՝ որ ուսումնարանի հոգաբարձական կազմը ընդառաջ գնայ մինչև Մօշալլու կայարանը հանգուցեալի մարմնին դիմաւորելու, որ բերվում է Շուշի՝ այստեղ թաղելու համար։

Նոյն օրը հեռագրվեց Էջմիածին՝ թոյլտուութիւն խնդրելու Վեհափառից, որպէսզի դիակը թաղվի այն եկեղեցու բակում, ուր գտնվում է հանգուցեալի կառուցած դպրոցը։ Էջմիածինը թոյլատրեց հեռագրով՝ «թաղել եկեղեցու բակում»։

Հասարակութեան լայն խաւերում խօսվում է աչքի ընկնող կտակի մասին. ոմանք պնդում են, որ 300,000 բուբլով ապահովել է թեմական դպրոցը, ոմանք էլ ասում են, որ Շուշի քաղաքում գտնվող տունը, ուր զետեղված է այժմ պօստ.-հեռ. գրասենեակը, կտակել է թեմ. դպրոցին։ Սակայն պաշտօնապէս առայժմ ոչինչ յայտնի չէ. բայց պարզ է մի բան, որ հանգուցեալը բարեգործական և կրթական հաստատութիւններին խոշոր կտակ է թողել։

Ամսի 28-ին դպրոցների և հասարակութեան պատգամաւորները կը ճանապարհվեն, իսկ թաղումը տեղի կունենայ 30-ին։

—

28 սեպտեմբերի

Այսօր, առաւօտեան ժամը 8-ից քաղաքի հայ ազգաբնակութիւնը ոտքի էր կանգնած. սկսած քաղաքագլխից մինչև վերջին արհեստաւորը, առաջնորդարանի տեղապահից մինչև ժամկոչը՝ իրար խառնված պատրաստվում էին ընդառաջ գնալու։

Ճաշից յետոյ, ժամը 2-ից, չը նայելով արեգակի կիզիչ ջերմութեան, քաղաքի գերեզմանատան շուրջը, խճուղու ճանապարհի աջ ու ձախ կողմերը, շրջակայ բլուրների գագաթներն ու ստորոտները ծածկված էին երկսեռ, մեծ ու փոքր բազմութեամբ։

Համաձայն Աղդամից ստացված հեռագրի, հանգուցեալի մարմինը ժամը 3-ին պիտի հասնէր տեղս։

Ուղիղ ժամը 3-ին ես գտնվում էի հայոց գերեզմանատան մօտ, ուր կանգնած էին հանգուցեալի տոմական գերեզմանոցի շուրջը տեղիս առաջնորդարանի տեղապահ-փոխանորդ Եղիշէ վարդ. Ահարոնեանը, Շուշու ամբողջ քահանայական կազմը, ամբողջ համքարութիւնը իրանց ներկայացուցիչներով և գեղեցիկ դրօշակներով, որոնց թիւը 15 էր. ճանապարհի վերին մասում, գերեզմանոցի դիմաց, քաղաքիս թուրքաց ներկայացուցիչները, հայ հասարակութեան ներկայացուցիչ երեցփոխները, հանգուցեալի միջոցներով պահվող «Ի. Թադէոսեան» անուն կրող ծխական ուսումնարանի աշակերտ-աշակերտուհիներն իրանց ուսուցիչներով, որոնց թիւը 125 է, և բազմաթիւ հասարակութիւն։

Կէս ժամից յետոյ լսվեց փողի ձայնը, և բլուրների ստորոտից երևացին ձիաւորների խմբեր, որոնք առաւօտվանից գնացել էին ընդառաջ։ Մի քանի րօպէից յետոյ թաւով 14 կառքեր իրար հետևից մօտեցան դէպի շարան-շարան կանգնած բազմութիւնը։

Առաջին կառքում երևաց թուրքաց ղազին իր օգնականով՝ երկու հեղինակաւոր թուրքերի և քաղաքային թուրք ձայնաւորի հետ, որոնք, իրանց հոգևոր հօրը առնելով, գնացել էին առաջին կայարանը դիմաւորելու. այդ երևոյթը համակրանք առաջ բերեց հայ հասարակութեան մէջ դէպի հարեան թուրքերը, իսկ հակակրանք՝ դէպի անփորձ Եղիշէ վարդապետը, որը ոչ միայն ինքը թուրքաց հոգևորականութեան չափ մի կայարան չէր գնացել, այլ և մի քահանայ անգամ չէր ուղարկել հոգևորականութեան կողմից։ Միւս կառքերում քաղաքացիներն էր, հանգուցեալի հարազատները, ազգականները և քաղաքացիների ներկայացուցիչներն ու հոգաբարձութիւնը։

Փերեզմանատան մօտ բոլոր կառքերը կանգնեցին, մօտեցաւ գաւառապետը, որը կարգի վրա խիստ հսկողութիւն էր անում, հանգուցեալի մարմինը կառքից իջեցրին, քանդեցին առաջին հասարակ արկղը և հանեցին դագաղը։ Վերջինիս շրջապատեցին համքարների դրօշակակիրները, հոգևորականը թիւնը ինչպէս հայերի, նոյնպէս և թուրքերի։ Դագաղը դրին գերեզմանաքարի վրա և սկսեցին կատարել հոգեհանգիստ։

Երբ հայ հոգևորականութիւնը կարգադրեց դագաղը վերցնել, մի քաղաքացի մօտեցաւ Եղիշէ վարդապետին և յայտնեց, որ քաղաքավարութիւնը պահանջում է իր մօտ կանգնած թուրք բարձրաստիճան հոգևորականին առաջարկել, որպէսզի սա եթէ որևէ խօսք ունի հանգուցեալին յաւերժացնելու՝ ասէ։ Եղիշէ վարդապետը դիմեց դազիին, որը ասաց. «Ես իմ ասելիքս առաջին կայարանումն եմ ասել...»։

Այնուհետև մարմինը, դիակառքի վրա դրված, և շրջապատված հոգևորականութեամբ, համքարներով և հասարակութեամբ, առաջնորդվեց դէպի քաղաք։

Քաղաք մտնելիս թուրքական թաղում նոյնպէս շարան-շարան կանգնած էր թուրք հասարակութիւնը, որը գլուխ խոնարհած յարգանքներ էր տալիս հանգուցեալին։

Թափօրը, շրջապատված հոգևորականութիւնից (հայ և թուրք), ուղղակի անցաւ հանգուցեալի սեփական տունը, ուր ապրել է ինքը. դագաղը տարվեց ներս. բակում հոգեհանգիստ կատարվելուց յետոյ, ծով բազմութիւնը՝ ուսերի վրա առած դագաղը՝ շարժվեց դէպի «Վերին Թաղի» եկեղեցին, ուր նոյնպէս սպասում էր ահագին երկսեռ ամբոխը։

Երբ մտան եկեղեցու բակը, կատարվեց նորից հոգեհանգիստ, որից յետոյ թուրք հոգևորականութիւնը բաժանվեց, և ցրվեց ամբոխը։

Ինչպէս վերև ասացի, դիակը զետեղվում է եկեղեցու բակում։

Թաղումը, ինչպէս ասացին, տեղի կունենայ ամսի 30-ին։

Վաղը կ. Հ. Բ. Ընկերութեան տեղիս ճիւղի վարչութիւնը պիտի ներկայանայ հանգուցեալի ժառանգներին մխիթարելու։

Սպասվում է, որ թաղման օրը բարեգործական մեծ կտակի յայտարարումը տեղի կունենայ, չը նայելով որ հանգուցեալը կենդանի ժամանակ պակաս բարեգործութիւններ չէ արել։ Ս. Գարագաշ

ՖԷԼԻԷՏՕՆ

ԵՍ ԲՈՂՈՔՈՒՄ ԵՄ

—

Մինչև ե՞րբ, ասացէք խնդրեմ, մինչև ե՞րբ օր օրի վրա հայ գրողը, ձեռքը գրիչ վերցնողը հայերին հայհոյի։

Առաջ այդ բանը մենք անում էինք տանտանում, մեր մէջ. կը ժողովվէինք մի տեղ, մի տան մէջ և ընկերաբար, բարեկամաբար կը հայհոյէինք հայոց ազգը, այնպէս որ մեզնից բացի ոչ ոք չէ. իմանայ մեր վատ լինելը, մեր պակասութիւնները։

Իսկ այսօր։

Այսօր երեսներիս վարագոյրը պատռել ենք. օրը-ցերեկով, հրապարակի մէջ, ողջ աշխարհի առաջ ենք անում նոյն բանը և ոչ միայն չենք ամաչում, այլ կարծես թէ պարծենում ենք նրանով, որ հայ ազգը վատ է։

Բայց այդպէ՞ս է արդեօք. վա՞տ է հայը։

Տեսնենք։

Մեղադրում են էջմիածնին, թէ նա ոչինչ չէ անում։

Սուտ է, բամբասանք, չարակամութիւն։

Ապա, ասացէք խնդրեմ, որտեղ ձեռնադրվեցին 10 եպիսկոպոսներ։ Հռոմում, Մեկկայում, Պետերբուրգում։

Իսկի էլ չէ. այլ մեր էջմիածնում, և այն էլ ընդամենը 2—3 շաբաթ առաջ. ոչ թէ 2—3 հոգի, ոչ, այլ միանգամից 10 եպիսկոպոս։

Եւ սա գործ չէ՞։

Յետոյ՝ մեղադրում են, թէ հայը հայերէն չը գիտէ, հայերէն խօսել, գրել չը գիտէ։

Hy, ասացէք խնդրեմ, դա ինչի՞ նման է։

Բանից դուրս է գալիս, որ ոչ թէ հայը հայերէն չը գիտէ, այլ հայ գրողը, հայ վարժապետն է, որ հայերէն չը գիտէ, իսկ սովորական հայը շատ լաւ գիտէ։

Կարդացէք Մանուկ Աբեղեանի յօդուածների շարանը «Հօրիզօնում», Ազեան-Վաղեանների գրածները, Տէր-Ղևոնդեան-Աղայեան-Թումանեանի, Մալխասեանի յօդուածները և կը համոզվէք, որ լեզու չիմացողը յամենայն դէպս հայ ազգը չէ, այլ... հայ գրողները։

Եթէ դրանք բաւական չեն, կարդացէք Բ. Իշխանեանի անվերջ և անպատում յօդուածները։

Ահա թէ ովքե՞ր հայերէն չը գիտեն. իսկ հայ ազգը շատ լաւ գիտէ իր լեզուն։

Գնանք առաջ։

Ասում են՝ հայը գիրք չէ սիրում։

Դա էլ սուտ է։

Եթէ հայը գիրք չէ սիրում, ապա ինչո՞ւ «Հօրիզօնը» ընդամենը մի քանի օր առաջ մի յաւուրվ առաջնորդողում ողջունեց «Դիր» և «Պետաղօցցի» գրավաճառանոցների բացումը։ Ինչ է, կարծում էք որ նա որևէ կմպ ունի այդ գրավաճառանոցներից մէկն ու մէկի հետ։

Իսկի էլ չէ. այլ մարդը տեսաւ, որ հայ ազգը առաջադիմում է, և վերցրեց գրիչը ու ամենանկեղծ կերպով ողջունեց գրավաճառանոցների բացումը։

Վաղը, մենք հաւատացած ենք, նոյն թերթը մի յօդուած կը նուիրի «Գուտտենբերգ» և «Կենտրօնական» գրավաճառանոցներին և կառաջարկի տօնել դրանց յօբելեանը կամ թէ, աւելի լաւ, արձան կանգնեցնել դրանց տէրերին։

Յետոյ՝ ասում են թէ հայը իր թատրօնը չէ սիրում։ Դարձեալ սուտ. պոչաւոր սուտ։

Ասացէք խնդրեմ, եթէ հայը չէ սիրում հայ թատրօնը, ապա ինչո՞ւ է թատրօնի նոր հրաւիրված բեժիսեօր Արմէնեանը ամեն օր, օրը 10 անգամ, արագ-արագ անց ու դարձ անում այս փողոցից այն փողոց։ Երևի մարդը մի բան է անում. թէ չէ՝ ինչ շտապելու բան կայ. կը գնար իրա համար հանգիստ ու անվրդով. փառք Աստուծոյ, մինչև սեզոնի սկիզբը՝ տարվայ վերջը, դեռ չորս-հինգ ամիս կայ։

Յետոյ՝ եթէ հայը իր թատրօնը չէ սիրում—ապա որտեղից են այնքան բեխերը ածիլած հայերը։

Ինչ է, կարծում էք թէ նրանք բոլորն էլ լուսաւորութեան մինիստրնե՞ր են կամ ներքինինե՞ր։ Իսկի էլ չէ. բոլորն էլ հայ դերասաններ են, որոնք կամ խաղում են, կամ խաղալու են և կամ թէ անցեալում խաղացել են։

Յետոյ՝ ասում են, թէ հայը իր կուլտուրական հաստատութիւնները չէ սիրում, նրանց չէ պահում։

Դա էլ սուտ է. սուտ է հէնց նրանով, որ ես ճանաչում եմ հարիւրաւոր հայ ուսումնարաններ, որոնք 200 բուբլով են ապրում։

Ասացէք խնդրեմ, եթէ մի ազգ իր ուսումարանը չը սիրէր, նա 200 մանէթով ուսումնարան, վարժապետ, վարժուհի կը պահէ՞ր. իսկի էլ չէ. այլ վեր կանէր ու... կը փակէր։

Իսկ մե՞նք. մենք պահում ենք, մեր հաշիւների մէջ տալիս ենք և դուշմանի աչքն էլ... հանում ենք։

Յետոյ. դուք անցել էք, վերջին օրերում գտնէ մի անգամ, Կ. Հայոց Բարեգործական Ընկերութեան շինութեան մասով։ Անցել էք։ Կարդացել էք նրա լուսամուտներից գրեթէ իւրաքանչիւրի վրա մեծ-մեծ տառերով գրված ցուցակները՝

«Որբանոց», «Ճաշարան», «Գրադարան», «Ընթերցարան»։

Ի՞նչ է, կարծում էք թէ ամբո՞ն ազգի հունարը է այդպէս բան անել. հանո՞ւ բան է ասել՝ «ամեն մի լուսամուտ մի-մի հաստատութիւն է»։ Եւ թող օտարները տեսնեն ու... ճաքեն։ Այդպէս բան միայն հայը կարող է անել...

Յետոյ՝ պնդում են, թէ հայերը լրագիր, մամուլ չեն սիրում։

Դարձեալ սուտ և այն էլ պոչաւոր սուտ։

Այս րօպէիս հէնց Թիֆլիսում լոյս են տեսնում տասներկու տեսակ, տասներկու անուններով հայերէն թերթեր. իսկ «Գաւառը», «Լոյսը», «Գարունն» ու «Ծաղը», «Ախուրեանն» ու «Թատրօնը», իսկ արտասահմանում, մանաւանդ Պօլսում դուրս եկող հայ թերթերը։

Աստուած վկայ, դրանցով կարելի է Շէյցարիայի ականջներից բռնել և տանել անկիւնում կանգնեցնել. «ամօթ քեզ,—ասել,—դեռ ես կուլտուրական ազգ ես անուանվում և ունես ընդամենը 38 հատ թերթեր. իսկ մենք՝ 89, հասանում է՞ք, 89-ը թերթ, և բոլորն էլ հայերէն»։

Մի խօքով, վատ, բամբասէը, չկամ մարդիկ են հայ գրողներն ու թղթակիցները։

Սովորել են հային հայհոյել, վատաբանել... նրա լաւը տեսնելիս քօռանում են, իսկ վատի անունն որ տալիս ես՝ «ուռա» են գոռում։

Պէտք է միանգամից վերջ տալ հայ գրողներին։

Եւ այն ժամանակ կը տեսնէք, թէ որքան լաւ, որքան նախանձելի է հայը։

Սալ-Ման

ԹԱՆԳՈՒԹԵԱՆ ԴԷՄ

«Մշակի» № 195-ում ես իմ թղթակցութեամբ ցոյց տալով հացի և այլ կենսական մթերքների թանգութեան պայմանները՝ աւելացրի, որ հարկաւոր է միացեալ ոյժերով դէմ դնել այն խրօնիքական թանգութեան, որը առաջ է գալիս պարբերաբար ժողովրդի առօրեայ կենսական պիտոյքների վերաբերմամբ։

Մի կողմից աղքատ ժողովրդի, սպառող հասարակութեան տնտեսական շահերն աչքի առաջ ունենալով, միւս կողմից սեփական օգուտները ի նկատի առնելով՝ ընկերութիւններ, համայնքներ և այլ կոմբինացիաներ պէտք է հանդէս գան և թանգութեան դէմն առնեն իրանց անվերջ մրցակցութեամբ։

Առօրեայ հշգրիտ փաստերը ցոյց են տալիս, որ մի ապրանք, երբ մի կամ երկու ձեռքերում է գտնվում, շատ թանգ գներով է վաճառվում և ժողովուրդը կամայ ակամայ համակերպվում է այդ գներին, մանաւանդ որ երբ ապարիչ է գնում։

Իսկ մեզանում յաճախ ժողովուրդը գնում է իր տան բոլոր հարկաւորութիւնները, ուտելիքից սկսած մինչև հագնելիքները, բոլորովին ապարիչ, այն էլ ինչ հրէշաւոր գներով։

Բայց ընդհակառակն՝ այն ապրանքները և այն մթերքները, որոնք ծախվում են շատ ձեռքերում և որոնցից շուկայում շատ են գտնվում,—դրանք անշուշտ էժան են գնահատվում, շնորհիւ ծախողների թէ մեծութեան և մրցակցութեան։

Հետաքրքրէս անուրանալի է, որ որքան ապրանքը մեծ քանակութեամբ է նկատվում բազարում և որքան վաճառողները բազմաթիւ են, նոյնքան և մթերքները և այլ նիւթերը էժան են գնահատվում։

Այդ իսկ տեսակէտից ընդհանուր տրամադրութիւնը հակվում է այն իրողութեան վրա, որ որքան կարելի է, ի սէր ժողովրդի և դասակարգային շահերի, դուրս գալին զանազան խմբակցութիւններ և ընկերական հիմունքների վրա սկսէին պարապել այլ և այլ մթերքների առևտրով *), որ կարողանար մեղմացնել թանգութեան պայմանները։

Թէպէտ թանգութեան ժամանակներում, իրանց սեփական շահերի տեսակէտից, շատերը հրապարակ են նետվում և վաճառականական նեղ և խախուտ հիմքերի վրա դրված՝ միայնակ, անհատապէս առաջ են տանում այդ գործը, բայց և այնպէս այդ գործողութիւնը երկար չէ տևում և մի կարճ ժամանակից յետոյ դադարում է, ուրեմն անհատական ձեռնարկութիւնը անզօր է լինում ժողովրդական մի մեծ գործ կատարելու։

Ինչպէս նախորդ թղթակցութեանս մէջն էլ եմ գրել, երբ մի ամիս սրանից առաջ հացի գինը մի բուբլուց բարձրացաւ 1 ր. 50 կ., սատանի երկիզ տիրեց ժողովրդի մէջ. բոլորը կարծում էին, որ այդ գները շուտով 2 ր. կը հասնեն, եթէ մի կողմից մի ճար չը բացվի։

Եւ ահա բացի մի քանի տեղական վաճառականներից, որոնք Ռուսաստանից մի քանի վագոն ալիւր ներմուծեցին քաղաքումս, դեռ Բօստովից էլ մի հեռագիր ստացվեց 6 հացէով, որոնց յայտնվում է, թէ ալիւրի գինը միանգամից 25 կօպ. պակսեցվում (տոպրակին) է և ապագայում անշուշտ էլի կը պակսեցվի։

Ուստի իսկոյն, խլրտում ընկնելով հացավաճառների և ցորենատէրերի մէջ, հացի գինը սկսեց իջնել, էժանանալ։

Միւս կողմից դրան զարկ տուեց նաև հարևան գաւառներում ստացված հացի բաւարար բերքը։

Եւ ահա ուրախալի է նկատել, որ երբ դեռ մի քանի հոգի վաճառականներ մի փոքր քանակութեամբ (2—3 վագօն) ալիւր են ներմուծում և այդքանով էժանութիւն առաջացնում վաճառանոցում, ապա որքան էժանութիւն կը տիրէ շուկայում, երբ դա լինի մեծ քանակութեամբ և ընկերական հիմունքների վրա դրված։

Այդ տեսակէտից ցանկալի կը լինէր, որ ընկերակցական ձեռնարկութիւններով օգնութեան գային չքաւոր դասին՝ էժան ուտեստներ հայթայթելով նրան։

Ինչպէս լսում ենք, մի քանի անձինք առանձին գումարներ վեր դնելով միտք են յղացել ընկերական հիմունքներով էժան գներով հաց մատակարարել սպառող ժողովրդին։

Հետևանքի մասին կը յայտնեմ իր ժամանակին։ Օրսորդ

Նոր-Բայազէտ, 27 սեպտեմբերի

ՌՈՒԹԱՅԻՍԻ ԲԱՐԲԵՐԻՑ

Բաբի մարդկանցից մէկը գիւղում սի փոքրիկ փայտէ եկեղեցի է շինում և դրանով իր անունը փառաւորում։ Մի չար մարդ մտածում է, թէ ինչպէս անէ, որ իր անունն էլ յիշվի գնում է հրդեհում այդ փոքրիկ կոթողը...

Վերաշինութեան կոչված մարդիկ չորս տարի անգործ մնալուց յետոյ, բաբի յիշատակութեան ոչ մի նմուշ չը թողնելով՝ մտածել են, գործից հեռանալով, իրանց եւևից, իբրև յիշատակ, գոնէ աւերմունքի հետքեր թողնել։

Մինչդեռ Թիֆլիսում ահագին գումար են ծախսում քաղաքի մի մասում աշխատական կերպով անտառ զարգացնելու համար, Բուխայիսում բնութիւնից պարգևված այդ շնորհը ոչնչացնելու վրա են զբաղված։ Քաղաքի ծայրից մինչև Ռիոն կայարանը, մօտ 10 վերստ տարածութեան վրա, ձգվում է քաղաքապատկան մի հրաշագեղ անտառ, ամբողջովին կաղնի ծառերից բաղկացած։ Այդ անտառը քաղաքի մի անփոխարինելի զարդն է կազմում և մաքուր օդ ու զովութիւն մատակարարում բնակիչներին։ Բայց ահա քաղաքի ընտրեալները մտածել են ոչնչացնել դրան։ Դրանք արմատախիլ են անում դարաւոր կաղնիները, քանդում են մատաղ թուփերը և ծախում երբեմն վառելիք սաժէնը 12 բուբլով։ Եւ իրանց արդարացնելու համար՝ այդ ստեղծելու անընդունակ մարդիկ առարկում են, թէ պէտք է կաղնի ծառերի փոխարէն զարգացնեն հակակի (ակացիա) ծառեր, որ աւելի օգտաւէտ է։ Այն ինչ՝ հասարակական այգում անցեալ տարի շատ հակակի ծառեր կտրատեցին և սոյնպէս ծախեցրին բրբև վառելիք։ Մարդ չէ կարողանում զսպել իր զայրոյթը, երբ տեսնում է, թէ ինչպէս այդ գեղեցիկ անտառը, որից հրացած ճանապարհորդը վագօնի լուսամուտից աչքը չէ հեռացնում, խոզերից քարուքանդ եղած պարտէզի է նմանում։

Տեղիս հարուստ վաճառականներ՝ Զանելիկէ, Զէլէվիլի և Մախարկէ քաղաքի գլխաւոր մասում, սպիտակ կամուրջի մօտ, սրբատաշ քարերից մի գեղեցիկ շինութիւն են կառուցանում։ Այդտեղ կամուրջի ծայրում գտնվում է մի հնացած, չաբչախված, տախտակէ բուդկա, որը ծառայում է իբրև կամուրջով անց ու դարձ անող սայլերից և կառքերից տուրք հաւաքելու տեղ։ Շինութիւնը կառուցանելուց յետոյ՝ այդ բուդկան մնացել է մեկուսացած՝ շինութեան առաջ, ցնցոտիներ հագած արբած մարդու պէս, մի կողմի վրա թեքված, և այնքան անճոռնի մի բան է, որ քաղաքի համար ծաղրի տեղ է բռնում։ Շինութեան տէրերը ոչ մի կերպով չեն կարողանում դրան վերցնել տալ, որը կանգնած է ուղիղ մագազինի դռան առաջ և թէ տգեղացնում է շինութիւնը, թէ խափանում նրա սուտքը։ Եթէ դա մասնաւոր մարդու պատկանէր՝ նրան շատ խիստ պատասխանատուութեան կենթարկէին։ Բայց զարմանք էք երևայելի, որ քաղաքիս վարչութիւնը՝ յօժարվում է վերցնել այդ անճոռնի կոյտը միայն այն ժամանակ, եթէ շինութեան տէրերը կամուրջի միւս ծայրում իրանց հաշվով նոր պանականոց կը շինեն, չը նայելով որ շինութեան իրաւունք տալուց խօսք անգամ չէ եղել այդ մասին։ Շինութեան տէրերը դանդատ են ներկայացրել դատարանին։

Մինչդեռ ուրիշ քաղաքներում նոր շինութիւն կառուցանողներին ստիպում են յետ քաշել շինութիւնը՝ փողոցը լայնացնելու համար և շատ դէպքում զրկած գետնի համար փող էլ են վճարում, Բուխայիսում, ընդհակառակն, տեսնում էք որքէ նոր շինութիւն երբեմն երկու աշշին դուրս է պրծացրած դէպի փողոց և այնքան սեղմած փողոցը, որ կառքերը միմեանց սիգնալ տալով պէտք է անց ու դարձ անեն։

Ամբողջ չորս տարվայ ընթացքում դրանց մտածմունքի առարկայ չեղան ոչ քաղաքային ջրանցք, ոչ կանալիզացիա, ոչ էլեքտրական կամ գոնէ կարգին նաւթային լուսաւորութիւն, ոչ էլեքտրաքարշ, կամ գոնէ ձիաքարշ, ոչ ներկայ գոմի փոխարէն թատրոնական մի համեստ շինութիւն։

Եւ ահա մեր քաղաքի ընտրեալների այդ անգործութիւնը չը վրիպեց ժողովրդի աչքից, և նա կարդաց իր դատավճիռը, իր շմնացուցիչ դատավճիռը։ Այդ այն է, որ քաղաքային իրաւասուների ընտրութիւնների ժամանակ քաղաքացուն Լօրդկիպանիձէ կատարելապէս սեւացաւ և գոնէ մի հատ էլ սպիտակ քուէ չը ստացաւ, իբրև վարձատրութիւն իր շինարարական աշխատանքի համար։ Ս. Նազարեան

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐ

II

Մոսկվա, 22 սեպտեմբերի

Թէև ես մի քանի անգամ առիթ եմ ունեցել գրելու ուսանողական կարիքների մասին, բայց և այնպէս ոչ մի անգամ լրիվ չէ աշողվել մամուլի նիւթ դարձնել այնպիսի մի կենսունակ և հրատապ խնդիր, որպիսին բնակարանային հարցն է։

Բնակարանային հարցը աւելի քան նշանաւոր տեղ է բռնում ուսանողական կեանքում. նա, հացի խնդրից յետոյ, ամենաառաջնակարգ տեղն ունի գրաւած մեր մէջ։ Եւ սա բնական է։ Մեզնից իւրաքանչիւրը մտածում է չոր, տաք, լուսաւոր և ուրիշ յարմարութիւններ ունեցող բնակարանի մասին. իսկ ուսանողութիւնն ամեն կերպ աշխատում է, որ իր բնակարանը մօտ լինի այն դպրոցին, ուր նա ուսանում է։ Բայց նա միայն կամենում է, աշխատում է, որ այդպէս լինի. իսկ այդ աշողվում է նրան թէ՞ ոչ. դժբաղդաբար՝ ոչ, որովհետև այդ ցաւոտներում բնակարանները բաւական թանգ են, թէև ուսանողների մի մասը շարունակում է ապրել բարձրագոյն դպրոցների շուրջը։

Փուչէ ոչ մի տարի բնակարանները մայրաքաղաքում այնքան թանգ չեն եղել, որքան այս տարի։ Օրերով փողոցներն ընկած՝ սենեակ ես որոնում, բայց չը կայ. ներողութիւն, աւելի ճիշդն է ասել՝ էժանագին, զբաղեցիր համապատասխան սենեակ չը կայ։ Մի տեղ պահանջում են 20 ր., միւս տեղը 25 ր., մի երրորդ տեղում 30—40—50 բուբլի ամսական. քիչ թէ շատ էժանանոց սենեակները վարձված են արդէն։ Եւ եթէ ներկայումս, որևէ թիւրիմացութեամբ, 10—12 բուբլանոց սենեակ ճարում ես, ունենում է մի շարք անյարմարութիւններ, ինչպէս օր. խոնաւ, կիսամութ, առանց կանկարասիքի, քաղաքի ամենահեռաւոր անկիւններում՝ կարված հաղորդակցութիւնից, կենտրոնից։ Փորձեցէք ապրել այդպիսի սենեակում, և դուք կը տեսնէք, որ նա բաւական թանգ կը նստի ձեր աղքատիկ գրպանի վրա. ցուրտ և խոնաւ սենեակում պարապել չէ լինում։ Վայը տարել է, եթէ բարակ վերարկուով ամեն օր դասը գնալիս լինես. այդպիսի դէպքում միշտ ի նկատի ունեցիր հիւանդութիւնը, որ յաճախ փոխվում է թոքախտի. մի երևոյթ, որ սովորական է մայրաքաղաքում, Ռուսաստանում։ Ուրեմն այսպիսի պարագաներում, պարզ և բնական է, պիտի աշխատես համապատասխան պայմաններ ստեղծել քեզ համար, այլապէս դու պէտք է սպասես քո ոսկի ժամանակը։ Իսկ ինչ վերաբերում է ուսանող վրա գործադրվող փողերին, պարզ է, որ նրանք այսպիսի պայմաններում չեն կարող ծառայել իրանց նպատակին։

Ընչու սենեակները թանգ են մայրաքաղաքում. ինչն է դրա պատճառը, ինչ է պատահել։

Այս հարցը յաճախ ինքն իրան տուել է ամեն մի ուսանող, և յաճախ մնացել բաւարար։ Պատճառները շատ են։

Նախ յիշատակենք, որ ուսանողների թիւը հետզհետէ մեծանում է. միայն համալսարանում նրանց թիւը հասնում է մօտ 12,000-ի, կանանց բարձր կուրսերում՝ 5000-ի, առևտրական ինստիտուտում՝ 3600-ի տեխնիկական դպրոցում՝ մօտ 3000-ի, և այլն. այնպէս որ ազատ և համարձակ կարելի է ասել, որ Մոսկվայի ուսանողութիւնը կազմում է 30,000 հոգուց բաղկացած մի խոշոր թիւ, եթէ ոչ աւելին. ուրեմն բնակարանների մեծ պահանջ կայ, որից և թանգանում են սենեակները։ Երկրորդ պատճառը տնատէրերի մէջ պիտի որոնել, որոնք վերջին տարիներս սիստեմատիկ կերպով աւելացրել են և շարունակում են աւելացնել բնակարանների վարձը։ Բայց մինչանկալ յիշենք, որ բնակարանները համեմատաբար այնքան թանգ չեն, որքան սենեակները։ Կայ և երրորդ յարգելի պատճառ, որի վրա արժէ ծանրանալ. խօսքս բնակարաններ վարձող կանանց մասին է, որոնք, մեծ մասամբ՝ զուրկ լինելով սեփական միջոցներից, պահում են բնակարաններ և սի կերպ քարշ տալիս իրանց գոյութիւնը։ Նրանք մէջերնիս երկուսերեք են վերցնում խեղճ ու կրակ ուսանողից։ Իլլիւստրացիայի համար յիշենք մի քանի օրինակներ։ Այսպէս՝ Շչիպօկ փող. 4 սենեակից բաղկացած բնակարանը, որ արժէր 30 ր. ամսական, տնտիրուհին տալիս էր 50—60 ր. ամսական, որից մի սենեակն էլ պահում էր իր համար. կամ Եակիմանկա փող. Պարիւշվի տանը 40—50 ր. արժեցող բնակարանը առատ հունձի ժամանակ բերում է 80—90 ր. ամսական. կամ Զօլիօնկա փող. Կոտօվի յայտնի տանը 60 ր. բնակարանը ապրուստի լաւ միջոց է ծառայում տանտիրուհու համար՝ տալով 100—110 ր. ամսական։ Բայց առաջ անցնենք դէպի ուսանողական թաղը՝ Մոսկվայի Լատինական կվարտալը—Բրօնայա և Կոզիցինկա կոչված քաղաքամասը. այստեղ ձեզ արդէն շահագործում են ամենանանբարեխիղճ և ամենախայտառակ կերպով։ Այստեղ դուք էր գտնէք յաճախ բնակարաններ, ուր տանտիրուհիները ապրում են խոհանոցներում։

Ստատիստիկական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ բնակարաններ վարձող անձանց մէջ կան մօտ 50 հազար կանայք, որոնք իրանց հերթին պարապում են սենեակներ վարձով տալով. իսկ այդ կանայք շատ մութ անցեալի տէր են։ Նրանց մէջ կան նախկին աղախիններ, կասկածելի պաշտօններ վարող անձինք, և այլն։ Այսպիսով նրանք ապրուստի մշտական աղբիւրներ չունենալով՝ իրանց նուիրում են այդ գործին։ Եւ նրանք, շատ չնչին բացառութեամբ, ապրում են յատկապէս դրսով։

Այս այսպէս լինելուց յետոյ, մնում է լուրջ կերպով մտածել այդ մասին, որպէս զի կարելի լինի չաբչաքը արմատախիլ անել, այլապէս այսպիսի ծանր և անելանելի վիճակ ուսանողութիւնը տանել անկարող է։ Փիլ թէ շատ բան արդէն արված է այդ ուղղութեամբ։

Դեռ 1908 թ. հրատարակվեց ուսանողական «Квартирная перепись»-ը, որ բաւական մեծ լոյս սփռեց այդ հարցի վրա, բայց ցաւօք սրտի պիտի ասեմ, որ այդ գրքի մնացած մասերը լոյս չը տեսան մինչև օրս։

Մեր համեստ կարծիքով, որպէս զի կարելի լինի բնակարանների թանգութեան առաջն առնել, հարկաւոր է գոյութիւն ունեցող հանրակացարանների և էժանագին սենեակների թիւը աւելացնել։ Ուսանողական հանրակացարաններից զատ Մոսկվայում կան մասնաւոր մէջոցներով կառուցված հանրակացարաններ, որոնցից յիշատակութեան արժանի են Բախրուշինների, Լեապինների, Լեպեշկինի հոյակապ հանրակացարանները. էլ չեմ յիշում Սօլօդօվնիկովի անուան էժանագին տները՝ քաղաքի մի ծայրում՝ 3-րդ Մեշչանսկայա փողոցի վրա, ուր 2000-ից աւելի հոգի են ապրում՝ 5—6 ր. ամսական վճարով։ Ի դէպ յիշեմ, որ այդ նոյն Սօլօդօվնիկովի թողած գումարներից մօտ 8 միլիոն բուբլի ևս պիտի ծախվի նմանօրինակ տների կառուցման վրա։ Դա, անշուշտ, շատ մեծ աշակցութիւն է, որ անվում է մայրաքաղաքի չքաւոր դասակարգին հանգուցեալի կտակատարների կողմից։

Ցանկալի է, սակայն, որ մեծ բարերարի համակրելի և գեղեցիկ օրինակին հետևէին տեղական խոշոր բարերարները, որոնք յաճախ անսպատակ և անբնական բարեգործութիւններ են անում առանց այն էլ հարուստ հիմարկութիւններին։

Անհրաժեշտ է հարստացնել մայրաքաղաքը էժանագին տներով, որպէսզի ուսանողութիւնն և աշխատաւոր դասակարգը հընարաւորութիւն ունենան մարդավայել կեանք վարելու։ Տարէ-ցտարի աւելացվող տները չեն, որ պիտի լուծեն այդ կնճռոտ խնդիրը։ Առանց մեր առաջարկած միջոցների ամեն տեսակ մղած կռիւ այդ երևոյթի դէմ մենք համարում ենք անսպատակ և անզօրեղ։

Բնակարանային, ինչպէս նաև ուսանողական կեանքին մօտ մի շարք հարցեր իրանց լուծումը կարող են ստանալ ուսանողական յատուկ օրգանի մէջ, որին մենք կը դառնանք, սակայն, յաջորդ անգամ։

Ոսկու-Զօն

ՖԻՆԼԱՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Ֆինլանդական սէյմի արձակումը մեծ սենսացիա առաջացրեց քաղաքական աշխարհում։ Սակայն այդ դէպքը անսպասելի չէր։ Արձակման հնարաւորութեան մասին «Новое Время» լրագիրը խօսում էր արդէն մի քանի օր առաջ։ Սէյմի արձակման վրա նայում են որպէս կառավարութեան առաջին կարգական քայլի վրա Ֆինլանդացիների դէմ սկսած կռիւի մէջ։ Ներկայ դէպքում կառավարութիւնը կանգնած է խիստ սահմանադրական հողի վրա։ Արձակելով այժմեան սէյմը, նա նշանակում է նոր օրէնսդրական ընտրութիւններ և նոր սէյմ գումարելու ժամանակամիջոց։ Լուրերի համեմատ, կառավարութիւնը մտադիր է այդ սէյմի քննութեանը ներկայացնել այն բոլոր օրինագծերը, որոնք վերաբերում են Ֆինլանդիայի ներքին կեանքին, և համակայսերական օրէնսդրութեան նախագծերը։ Սակայն հարցիս թէ գտնվի մարդ, որ կարծէ, թէ նոր սէյմի կազմը լուրջ կերպով տարբերվելու է այժմեան կազմից և որ նրա վերաբերմունքը դէպի այդ նախագիծը նոյնը կը լինի, ինչ որ արձակված սէյմինն էր։ Ֆինլանդիայի այժմեան ստատս սեկրետար Լանդօֆի հրաժարականը վճռված բան է համարվում։ Նրա պաշտօնը կը յանձնվի երևի Կօրեվօյին։ Վերջերս Տաւրիկեան պալատում խօսում էին, որ Պետական Դումայում շատապով օրինագիծ է մտցվում Ֆինլանդիայում ապրող ռուսահպատակների իրաւունքները Ֆինլանդացիների իրաւունքների հետ հաւասարեցնելու համար և մասնաւորապէս իրաւունք տալ նրանց բոլոր վարչական պաշտօնները վարելու։ Ֆինլանդիայում։ («Р. В.»)

ԽՕՍԵՐԱ

Հոկտեմբերի 1-ին բարակներում մնում էին խօլերայով հիւանդ 7 հոգի։ Այդ թւից առողջացաւ 1, մեռան 2, այժմ մնում են 4 հոգի։

Հոկտ. 1-ի գիշերը Օրդուբաթարկայա փողոցում № 29 տանը խօլերայով հիւանդացաւ և ուղարկվեց բարակները Ֆելդշեր Վասիլի Լիսկինը, 37 տարեկան։

1 հոկտեմբերի

Պետերբուրգ.—Խօլերայով հիւանդացան 10, մեռան 2, մնում են 218 հոգի։

Աւստրօ-ունգարական կառավարութիւնը Ռուսաստանի խօլերայի առիթով արգելել է ռուս հրէաներին ուխտով գնալ Գալիցիա։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Լուրերի համաձայն, ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական նշանակվում է պրոֆէսոր Դուբասէվը, որ կասոյի օգնականն էր Իւրիէվի համալսարանում։

◆ Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում մօտիկ ապագայում տեղի են ունենալու օդաչու Ուտօչկինի թռիչքները։ Իմանալով այդ մասին նախկին ըմբիշ Զաիկինը, որ ըմբշութեան արհեստը թողած վերջին ժամանակներս իրան նուիրել էր օդագնացութեանը և մի քանի անգամ էլ կատարեց Վլադիկաւկազ քաղաքում, հեռագրով ցանկութիւն է յայտնել ինքն ևս գալու Թիֆլիս և մի քանի փորձեր կատարելու։

◆ Երէկ հրէական սինագոգում, որ գտնվում է Արմեանների բաղարում, ցերեկվայ ժամը 11½-ին, աղօթելու ժամանակ, վէճ ծագեց մի քանի հրէաների միջև։ Պարսկահպատակ Բահիմ Մուսա-օղլին դանակով վիրաւորեց 1-ին կարգի վաճառական Բահիմօվին պարանոցից։ Վիրաւորվածին տարան Միքայէլեան հիւանդանոցը, իսկ յանցաւորին կալանաւորեցին։

◆ Հոկտեմբերի 2-ին, առ. ժամը 5-ին, կախաղան բարձրացրին կովկասեան զինուորական դատարանի վճռով Խորէն Ակուլեանին և Յարութիւն Միսեանին ինժենէր Կերշնէրին սպանելուն համար, Դէօրգի Բասիլաշվիլին՝ Կոնստանտին Դաշիձէին սպանելուն համար, և Ս. Աւետարանային՝ զինուոր Գրիգոր Մացէրօգլին սպանելուն համար։

◆ Այսօր, կիրակի, 2-րդ գիմնազիայի դահլիճում Ա. Բօգովը Ժողովրդական Տանը յօգուտ ժողովրդական համալսարանների ընկերութեան կը կարդայ դասախօսութիւն «Լեվ Տոլստոյը Կովկասում»։ Դասախօսութիւնից յետոյ, որի սկիզբը նշանակված է ցերեկվայ ժամը 11-ին, տեղի կունենայ ձրի համերգ։

◆ Վաղվանից «Մօդերն» թատրոնում, Միքայէլեան փողոցի վրա, հանդէս կը գայ իր ներկայացումներով յայտնի պարուհի Մարիամ Արմէնիսը։

◆ Սեպտ. 30-ին, հակա-ժանտախտային գործադիր ժանտաժողովի որոշմամբ Օրթաճալայում մորթեցին 15 գլուխ ժանտախտով հիւանդ անասունների, որոնք պատկանում էին Քէրիմ Ահմէդ-օղլուն, որին կը տրվի մորթած անասունների արժէքը։

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ Իվան Թօխաթէլօվը ենթարկվում է 25 ր. տուգանքի էլեքտրաքարշի վագօնում ծխելուն համար։

◆ Թիֆլիսի Հայուհեաց Որբանոցի Ընկերութեան վարչութիւնը խնդրում է տպել հետեւեալը. «Ընկերութեան վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը վարչութեան անդամուհի կոյս Իսկուհի Էնֆիաճեանին, որը նուիրել է ընկերութեանը Եղ. Ծովեանների և ընկ. Աուտրական Տան իր ունեցած 200 ր. արժողութեամբ մի օբլիգացիա։ Յայտնում է նոյնպէս իր խորին շնորհակալութիւնը ամուսիններ Շուշանիկ և Գասպար Տէր-Մարգարեաններին, որոնք հանգուցեալ Բաղդասարի Խալուիանեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն նուիրել են ընկերութեանը 25 ր., նաև տ. Զաքմաղեանին, որը նուիրել է 4 բուբլի»։

◆ Վանից ամառս Թիֆլիս եկած Հայկ Տէր-Մկրտչեանի ձեռքով ուղարկված է Վարագի դպրոցին 36 օրինակ «Հայոց Հայրիկը Օսմանեան» պատկերազարդ, յօրելեանական առիթով, 30 ր. արժողութեամբ որից 30 օրինակը նուէր տ. Նատալիա Գրիգորեան կրասիլնիկեանից հանգուցեալ տ. Աննա Յովհաննիսեան Ղուկասեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն, իսկ 6 ր. նուէր բժշկապետ Միքայել Ս. Շահպարոնեանից։

◆ Այսօր, կիրակի, հոկտ. 3-ին, Բօրսայի դահլիճում տեղի կունենայ Ա. Վրոյի ղեկավարութեամբ կազմված հայ թատերական նորակազմ խմբի սեզոնի բացման ներկայացումը։ Կը ներկայացվի «Ցրից բարեկամ» կոմեդիան։

◆ Այսօրվանից Աբքունական և Արտիստական թատրոններում տրվելու են նաև ցերեկվայ ներկայացումներ հանրամատչելի գներով։

◆ Հալաբարի «Նոր-Դրամա» ընկերութիւնը, բեժիտեսութեամբ Ա.Ա. Պարտեանի, մասնակցութեամբ Տէր-Գրիգորեանի, այսօր ներկայացնելու է Փափազեանի «Ծայրը»։

◆ Երկրորդ Դումայի նախկին անդամներ Ծերեթելին և Մախարաձէն շատ վատ դրութեան մէջ են Նիկոլայեւի բանտում։

◆ Սիմֆերօպոլում ոմն Լավրով հիւանդացել է տարվել ժանտախտի կասկածելի նշաններով։ Եթէ այդ ճշդվի, կը նշանակէ այդ սոսկալի հիւրը Թիֆլիսից այնքան էլ հեռու չը պէտք է ընդունել։ Արդէն տպագրվում են և մօտ օրերս լոյս կը տեսնէ Թիֆլիսի բժշկա-սանիտարական մարմնի կազմած ընդարձակ տեղեկագիրը ժանտախտի և նրա դէմ կռուելու միջոցների մասին։ Բոլորեքեան այդ տեղեկագիրը կարող են ձրի ստանալ քաղաքային վարչութիւնից և բոլոր դեղատներից։

◆ Բագուեցի բժիշկ Սարգսեանը բժշկական մարմնի յանձնարարութեամբ ուսումնասիրվում է արտասահման էրլիխի «606» պրէպարատով թոքախտաւորներին բուժելու մէթոդը ուսումնասիրելու համար։

◆ Բագում պաշտօնական արին Իրմայլով ուսուցչին, որ վերջերս գանակոծեց իր աշակերտներից մէկին։

◆ Պետերբուրգի առևտրական դատակարգի ընդհ. ժողովը որոշել է դիմել Պետական Դումային՝ միջնորդելով փոխել գործակատարների նորմալ հանգստութեան վերաբերեալ օրինագիծը, սահմանելով փոխանակ 12 ի՝ 16 ժամ բանուորական օր։

ՐՈՏՈՐՔ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Իշխան Սումբատովի «Արքազանօվներ» («Арказановы») պիէսան

Ռուսաց դրամատիկական արտիստների խումբը, Նիկուլինի ղեկավարութեամբ, ուրբաթ օրը, հոկտ. 1-ին Արտիստական Ընկերութեան թատրոնում ներկայացրեց իշխան Սումբատովի այդ դրամատիկական երկը առաջին անգամ Թիֆլիսում։

Բովանդակութիւնը հետևեալն է.

Դմիտրի Անդրէյեվիչ Արկազանօվը, մի կալուածատէր, մասնակցում է բազմաթիւ ակցիօներական ձեռնարկութիւնների մէջ, դնելով և իր դրամագլուխները, բայց, լե-

*) Գէպք է ասել, որ այժմ արդէն ուսանողների և այլ մթերքների սպառումը իր գագաթնակէտին է հասել ամեն տեղ։ Ս.

նելով անփորձ, անզգոյշ, նա ընկնում է աֆէրիստ գործողների և վաշխառուների ձեռքը, ստորագրում է բազմաթիվ թղթեր, զգումենտներ, որոնք կարող են նրա համար ստեղծել քրէական պատասխանատուութիւն, և իր գործերը հասցնում է այն դրութեան, որ 300 000 ր. ակտիվի դէմ ունի 700,000 ր. պասսիվ և ամեն բոլէ նրան սպառնում է մնանկութիւն և բանտ։ Բայց նա ազնիւ մարդ է, որդեսէր հայր և բարեսիրտ։ Ազնիւ և վեհ զգացմունքներով օժտված են, մանաւանդ պատասխանատուութեան զգացումով, նրա կինը՝ Վարվարա Իվանովնան, աղջիկը՝ գեղանի Օլգան և գիմնազիստ որդին՝ Բորիսը, որի մէջ տոհմային պատասխանատուութիւնը հիւանդոտութեան է հասնում։ Արկադանովը աշխատում է ծածկել իր յուսահատ դրութիւնը ընտանիքից։ բայց կինը կարողացել է իմանալ և հանգստութիւն չունի. նա իր ցաւերը պատմում է Արկադանովի համալսարանական ընկեր բժիշկ Պավէլ Տիմիրեազեվին, որ նոյնպէս որոշ գումար է դրել ձեռնարկութիւնների մէջ և վերին աստիճանի ազնիւ, բարի մի անձ է և անկեղծ ու հաւատարիմ բարեկամ։ Բժիշկը ստիպում է Արկադանովին խոստովանել և, երբ իմանում է գործերի իսկական դրութիւնը, սարսափած ու շուարած մնում է։ Իբրև միակ միջոց՝ առաջարկում է ծախել ամեն բան, վճարել պարտքերը և գնալ մի այլ տեղ՝ մի պաշտօն գտնել։ Նա առաջարկում է նոյն իսկ իր ունեցած ամբողջ կարողութիւնը վերցնել։

Այդտեղ հանդէս է գալիս պիէսի գլխաւոր հերոսը՝ Նավարիգինը։ Սա եղել է մի աղքատ ուսանող, որի մայրը և քոյրը մեռել են քաղցից և թոքախտից։ Նա հզօր կամքի և տոկուն բնաւորութեան տէր մարդ է։ Նրան աջողվել է կեանքի մէջ մրցել, և՝ իբրև ոչ մի միջոցից չը քաշվող մարդ՝ ամուսնացել է մի «ոսկէ քսակի», միլիոններ ունեցող մի ապուշ, տգեղ և իրանից տարիքով շատ մեծ կնոջ հետ։ Գումար և կարեկցութիւն նա չունի. նրա մէջ մեռած են մարդկային զգացումները. նա աֆէրիստ է, վաշխառու և կեղեքիչ և կարողացել է ահագին հարստութիւն դիզել։ նա է, որ ձրգել է իր ցանցի մէջ և Արկադանովին, և ահա նա գալիս է պահանջելու նրանից 700,000 ռուբլի պարտքը և սպառնալու նրան մնանկութեամբ, բանտով և խայտառակութեամբ։ Արկադանովի աղերսը՝ օգնել իրան, ընտանիքի կործանման պատճառ չը դառնալ՝ չէ օգնում. նա անդրդուելի է։ Նա կամենում է ստորացնել, ճզմել այդ իդեալիստ և ազնիւ կալուածատիրոջ, որ միշտ արհամարհանքով էր վերաբերվում իրան։ Բայց այդ միջոցին սենեակն է մտնում գեղանի, մատաղահաս Օլգան, և օրիորդի գեղեցկութիւնը, անմեղութիւնը այնքան հմայում է Նավարիգինին, որ նա բարոյական զօրեղ ցնցումն է կրում. նրան թւում է, որ այդ անբիծ, անարատ աղջկայ սէրը կարող է նրան վերածնել տալ, և նա փոխում է դիտաւորութիւնը ու մտածում օգնել Արկադանովին։ Օլգայի վրա ևս Նավարիգինը թողնում է զօրեղ տպաւորութիւն և նրա սրտի մէջ բռնկվում է սէր, որ ամեն կերպ աշխատում է թաքցնել։ Նավարիգինի մէջ կատարված յեղաշրջումը նկատում է նրա սիրուհի Վիրինէան, որ խորհուրդ է տալիս նրան, քանի որ Օլգայի հետ ամուսնանալ չէ կարող, ամուսնացնել նրան իրան հլու հպատակ մի մարդու հետ և ապա իր սիրուհին դարձնել։ Սկզբում Նավարիգինը զայրոյթով մերժում է այդպիսի մի անարգ վարմունք, բայց յետոյ կիրքը գրգռում նրան նախկին եսասէր և փչացած մարդը, և նա իր կնոջ մի ազգականին, որ բօսակ է, արբեցող և փչացած մարդ, ընդունելով իբ տանը, իբրև ազգականի, հագուստ, բնակարան, փող է տալիս և, ցոյց տալով նրան իբրև մի կալուածատէր, միջնորդում է և խնդրում Օլգայի ձեռքը այդ բարոյական տիղմով ծածկված մարդու համար։ Օլգան, Արկադանովը և կինը զայրոյթով մերժում են. Նավարիգինը սպառնում է մնանկութեամբ, բանտով և սկանդալով։ Արկադանովը անդրդուելի է մնում։ Նավարիգինը գործադրում է սպառնալիքը և Արկադանովը ոչ միայն կործանվում է, այլ և բանտ գնում։ Հօրը ազատելու համար, Օլգան, որ թագուն սիրում էր Նավարիգինին և չէր հաւատում երբէք տարածված լուրերին, որ նա կեղեքիչ է և իր հօր կործանիչը, գնում է նրա մօտ և խնդրում փրկել հօրը։ Նավարիգինը այդտեղ բացում է սիրտը, յայտնում է իր սէրը և հօրը խայտառակութիւնից ազատելու իբրև փրկանք պահանջում է, որ Օլգան դառնայ իր սիրուհին։ Օլգան սթափվում է և նրա սէրը փոխվում է սաստիկ ատելութեան ու ժերժումով հեռանում է, որից յետոյ Նավարիգինը, կատաղած, գործադրում է իր սպառնալիքը։

Պիէսայի հերոսն է ուրեմն Նավարիգինը, որի դերը կատարում էր Նիկուլինը, իսկ հերոսուհին՝ Օլգան, որի դերը կատարում էր Զարօվան։ Չէ կարելի ասել, որ իշխան Սումբատովի այս պիէսան իր ամբողջութեամբ աջողված է։ Նավարիգինի մէջ նա կամեցել է ամփոփել երկու ծայրայեղութիւններ, միացնել երկու իրար հակադիր զգացումներ. էգոիստ, բարոյական ամէն մի սկզբունք հերքող Նավարիգինի կողքին դրել է վեհ թռիչքներ ունեցող և մաքրագործվելու տենչով համակված մի այլ Նավարիգին, իսկ Օլգան, այդ դեռահաս և անփորձ աղջիկը, դուրս է բերված օժտված ամեն տեսակ առաքինութիւններով, մինչդրա փոխարէն Նավարիգինի կինը՝ «ոսկէ քսակ» Վիրինէան դուրս է բերված կատարելագործված տգեղութիւն, ագշութիւն և զզուանք։ Դժուար թէ կեանքի մէջ այդ տեսակ տիպեր լինեն։ Հիւանդոտ տիպ է և գիմնազիստ Բորիսը, ինչպէս վերին աստիճանի միամիտ և խեղճ տիպ է զօկտոր Տիմիրեազեվը։ Շատ աջողված է բօսակ Ֆուֆինի դերը, այն ազգականի, որ մի փոր կուշտ հացի համար պատրաստ է ծախել և խիղճ, և գազափար, և ամեն տեսակ ստորութիւն անել։ Հ. Ա.

—

Վրաց թատրոնի ռէպերտուարը հարստացաւ մի նոր ինքնուրոյն պիէսով ևս, որ պատկանում է Ն. Շիուկաշվիլիի գրչին և կոչվում է «Այլանդակութիւն», դրամա 4 գործ. որը խաղացվեց վրաց թատրոնում հոկտ. 1-ին, մանակցութեամբ երիտասարդ ոյժերի։

Պիէսում դուրս են բերված հին և նոր աշխարհահայեացքների մի շարք ներկայացուցիչներ, որոնք վիճում, խօսում, դատում են, բայց ոչ մէկը չէ կարողանում միւսին համոզել, իր ասածների ճշմարտութեան մէջ։

Ի միջի այլոց պատկերացրած են բաւականին աջող կերպով նոր սերնդի այն տիպի երիտասարդներ, որոնք բարձրագոյն ուսում ստանալու համար դիմում են ամեն միջոցների, ծանրանում են առաւելապէս չունևոր և ոռճկով ապրող հայրերի վրա և մոռացութեան են տալիս մտաւոր պաշարի հետ միացեալ ֆիզիկական զարգացման ևս ոյժ տալը։

Պիէսի հերոսներն են մի ուսանող և մի Ցուլակամ ուսանողուհի, որոնք սիրում են իրար։ Մի օր սակայն ուսանողը խոստովանվում է, որ ինքը մի ժամանակ սիրային յարաբերութեան մէջ է եղել ամուսնացած մի կնոջ հետ, թէև նրան չէ սիրել։

Այս լուրը ցնցող տպաւորութիւն է թողնում ուսանողուհու վրա, թէև նա ինքն իրան չը կորցնելով՝ հնարում է նման մի բան և պատմում ուսանողին, որ ինքն էլ կոյս չէ, թէև նոյնպէս առաջնին չէ սիրել և իրան՝ ուսանողին է միայն սիրում։

Ուսանողի մէջ խօսում է տղամարդու բռնակալութիւնը. թէև նա թէօրիայով կանանց էմանսիպացիայի կողմնակից է, բայց և այնպէս չէ կարողանում հաշտվել այդպիսի իրողութեան հետ և մերժում է նրա հետ ամուսնանալ։

Այդ փորձաքարը այնչափ ուժեղ տպաւորութիւն է թողնում ուսանողուհու վրա, որ նա միանգամայն հիասթափվում է և գալիս է այն համոզման, որ տղամարդիկ առհասարակ գաղափարական սէր չը գիտեն, այլ նրանց միայն հետաքրքրում է կնոջ ֆիզիկական մաքրութիւնը։

Այդ տպաւորութեան տակ ուսանողուհին որոշում է ամուսնանալ իր ձեռքը խնդրող մի այլանդակ, մարմնական արատներ ունեցող մի ճիւաղանման մարդու հետ, որը վաշխառութեամբ պարապելով, իր նպատակին հասնելու համար, օգտվելով ուսանողուհու պետական պաշտօնեայ հօր նիւթական անձուկ վիճակից, նրան փոխարինաբար փող է տալիս և այդպիսով գցում է նրան իր լարած թակարդի մէջ։

Աղջկան համոզում են չանել այդ քայլը, բայց չը նայած այդ ամենին, ամուսնութիւնը կայանում է։ Բայց հէնց ամուսնութեան գիշերը, նախկին տարփածուն, ուսանողը, իմանալով որ նորահարսը կոյս է, համոզում է նրան անձնասուր չը լինել ճիւաղին, այլ ինքնասպանութիւն գործել. և երբ այլանդակ ամուսինը մտնում է իր ջահել հարսին, նա սարսափահար փախչում է նրանից և ինքնասպան լինում։

Պիէսը ընդհանուր առմամբ կենսական կողմեր է պարունակում իր մէջ։ Նա դուրս է կորզած իրական կեանքից, թէև տեղ-տեղ բռնազբօսիկ կերպով շաղկապուած կան։ Նա կարող է ապրել բեմի վրա, մինչև որ ներկայ կեանքը գտնվում է քաօսային վիճակի մէջ և քանի որ մեր հասարակական հասկացողութիւնների մէջ տիրում է խառնաշփոթ դրութիւն։

Խաղը անցաւ շատ կենդանի։ Ա—ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 28 սեպտեմբերի

Խորհուրդ խորին շնորհակալութիւն է յայտնում մեծ. տ. Մարիամ Ստեփանեան Լազարեանին, որ հաճեց նուիրել մեր, Հայոց Ազգագրական Ընկերութեան, Կովկասագիտական-Մարդաբանական գրադարանին մօտ 2,000 ր. արժողութեան գրքեր և ձեռագիրներ։

Նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան
Անդամ-քարտ.՝ Ե. Լալաեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԷԼՏԱՆԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Վիէննայի «Zeit» լրագրի աշխատակիցը այցելեց Կամիլ Պէլտանին և խօսակցեց նրա հետ Ֆրանս-Թիւրքական յարաբերութիւնների մասին։ Որովհետև Պէլտանը, Թիւրքիայում սահմանադրութիւն հրատարակվելուց յետոյ, մեծ ճանապարհորդութիւն կատարեց այնտեղ և ապա քարոզում էր Ֆրանսիական մամուլի մէջ, որ կառավարութիւնը բարեկամանայ երիտասարդ-Թիւրքերի հետ, այդ պատճառով նրա խօսքերը առանձին նշանակութիւն են ստանում։

Պէլտան ասաց «Zeit» լրագրի թղթակցին. «Մենք շատ լաւ գիտենք, որ Թիւրքիայի Թշնամութիւնը դէպի Ֆրանսիան գերմանական ազդեցութեան հետևանք է։ Թիւրքիան այժմ երես է դարձնում իր բնական հովանաւորից՝ Ֆրանսիայից։ Ֆրանսիացիները միշտ համակրում են նրանց, որոնք զբաղվում են իրանց հողերից։ Այդ պատճառով նրանք չեն հասկանում, թէ ինչպէս երիտասարդ-Թիւրքերը իրանց աշկարա թշնամիների—Գերմանիայի և Աւստրիայի—խորհուրդները լսեցին։ Երիտասարդ Թիւրքերը նոյնպէս չեն տեսնում, թէ որպէս գերմանացիները Կ. Պոլսից գնում են Բաղդադ։ Երիտասարդ-Թիւրքերի բարեկամութիւնը Աւստրիայի և Գերմանիայի հետ ճակատագրական կը լինի նրանց համար և միջազգային բնաւորութեան հետևանքներ կունենայ։ Բալկանեան թերակղզու վրա հաւասարակշռութիւնը խախտելուց կը ջնջվեն և երիտասարդ-Թիւրքերը։ Թիւրքիան ի զուր է հակառակվում Ֆրանսիայի այն ցանկութեանը, որ Թիւրքական ֆինանսները ենթարկվեն լուրջ ռէֆորմի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

1 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օդագնացութեան տօնը վերջացաւ։ Ուժեղ քամու հետ թռաւ միայն Եֆիմովը։

ՎՕՐՕՆԵԺ։ Բացվեց թուչնապահութեան ընկերութեան ցուցահանդէսը և մեղուաբուծութեան ընդարձակ բաժանմունքը։ Թոյլատրված է մեղուաբոյծների համագումարը։

ԿԻՍԼՈՎՈԴՍԿ (պատահական)։ Տար եղանակի մէջ բացվեց ձմերային բժշկական սէզօնը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ։ Բացվեց ֆարթիկագործարանային և հանքային բժիշկների համագումարը։

ԼԱՆԴԱՈՒ։ Արագ գնացքը ընդհարվեց ապրանքատար գնացքին։ Շոգեմեքենան և պօստային ու 7 ուրիշ վագոններ ջարդվեցին։ Թեթև վիրաւորվեցին 7 մարդ։

ՕԴԵՍՍԱ։ Բացվեց հարաւ-ռուսական ընկերութեան նկարչական ցուցահանդէսը։

ԿԻԵՎ։ Ռուս հողատէրերի, ձայնաւորների և նահանգական զէմստվային կօմիտէների անդամների նիստում որոշվեց միջնորդել մինիստրների խորհրդի, Պետական Խորհրդի և Դումայի առաջ՝ շուտափոյթ մտցնել ընտրողական զէմստվո Հարաւ-Արևմտեան երկրում Դումայի ընդունած սկզբունքներով, կրճատելով նաև հողատիրութեան ցենզը և ուժեղացնելով հոգևորականութեան ներկայացուցչութիւնը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ։ Բացվեց տնայնագործների շրջանային համագումարը։

ԽԱԲԱՐՈՎՍԿ։ Գիշչինսկիի կարգադրութեամբ պաշտօնեներից հեռացվեցին և յանձնվեցին դատարանին նահանգական ինտենդանտ Կարպով, հերիսկոնսուլտ Վակսմիտ, բաժանմունքի կառավարիչ Կապիտանով, խանութների հսկիչներ Նովակովսկի և Շլեսանիկով, ջրաղացի կառավարիչ Սօլովիէվ, իրեղէնների պահեստի հսկիչ Պլէշկո, զինուորական ինժենէր Օսկոլկով։

ՊԷՏԻՆ։ Եկաւ գերմանական գաղութների նախկին մինիստր Դերնբուրգ, նաև ամերիկական առևտրական պալատների ներկայացուցիչները, որոնց ամենուրեք սիրալիր ընդունելութիւն են ցոյց տալիս։ Պետական խնամակալը ընդունելու է եկեղեցիներին։ Գաւառական ժողովը ընդունեց զինուորական նահանգապետի նախագիծը՝ Մանջուրիայում արդիւնաբերական բանկ հիմնելու մասին՝ 2 միլիոն դօլլար դրամագլխով։

Ժամ. Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ԹԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Զինուորական մասնագէտ-բժիշկների
Երթևեկ հիւանդների համար

Զանգի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ։

ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.

ՏԷԼԵՓՈՆ № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը 9½-ից մինչև 5-ը ցերեկվայ։

ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.։

ՈՒԿԱԴՆԻԿՈՎ Ի. Օ.—ներքին հիւանդութիւններ, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.։

ՎՆՈՒԿՈՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.։

ՐԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ. ցեր.։

ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—3 ժ.։

ԽԱՏԻՍՈՎ Ն. Դ.—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի և երեքշաբաթից։

ՆՕՎԻՑԿԻՑ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 1—2 ժ.։

ՍԱՐԱՊ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 12—1 ժ.։

ՏԷՏՐԱՇԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.։

ԱՍՊԻՍՈՎ Ն. Մ.—ականջի, կոկորդի և քթի հիւ., առ. ժամը 1—2 ը ցեր.։

ԿԻՆ ԲԺ. ԻՈՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.։

ՎԵՍԵԼՈՎԶՕՐՕՎ Ն. Ն.—խիրուրգ. հիւ., ամեն օր՝ ցեր. ժամը 2—3-ը։

ԶՈՒԴՆՕՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլեքտրոտերապիա., ամեն օր՝ բացի կիրակի օրերից՝ ցեր. ժ. 4—5-ը։

ՄԿՐՏՈՒՄԵԱՆ. — սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ 10½—11 ժ. առ.։

ՊՕՆԴՈԵՎ—ջղային հիւ. և էլեքտրոտերապիա. ամեն օր, ժամը 11—12-ը։

Համախորհուրդ, օպէրացիոներ, մասաժ, ծաղկի պատուաստում, անալիզ, հիպնոզ, ստնդուների և ծառաների քննութիւն—առանձին վճարով։ Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի։

(Կ.) 356. 100—54

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վենեռական և կաշուի հիւանդութիւնների։

Ընդունելութիւնը ամեն օր { 12½—2 ժ. ցերեկվայ, 5—7 ժ. երեկոյեան։ Կանանց համար՝ 2—3 ժ. ց.

Հասցէն { Սօլոլակ, Բէլուսովսկայա, № 33. Сололаки, уголъ Бебутовской и Паскевича, 33.

(Չ. ու. Կ.) 1134. 100—15

ԲԺԻՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԻԳԻԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վեզիամինսկայա փող. № 8

(Կ. Տ.) 561. 100—19

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։

Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)

Միքայէլեան փող., № 36. Տէլէֆոն № 38

(Ե.Հ.Կ.) 909. 100—25

ՖԻԼԴՇԻՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ

ՖԷԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Կատարում է սրսկումներ, վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втираніе) և այլն։ Բժշկութիւն տղամարդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ երազախաբի։ Մասնաժ էլեքտրական և ձեռքով։ Բժշկական մարմնամարզութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների—վեներական, ներքին և այլ հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Շաբաթներին ձրի միմիայն չորեքշաբթի օրերը։ Զօրանոցի արձանի մօտ, Семеновская ул. № 9.

(Կ. Հ.) 913. 50—16

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

Ս. Զ. ԽԻԶԱՆԵԱՆ

Վեզեամինսկայա № 14.
Ընդունելութիւնը՝ 4—6 ժ. երեկոյեան։

(Չ. ու. Կ.) 1133. 10—3

ՑԱՌՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆ

Լիակ. ռուս-հայ բառ., գինը 7 ր., կազմով 8 ր.։ Լիակ. հայ ռուս բառ., բաժանորդագինը 4 ր. և 5 ր.։ Տպագրութիւնը շուտով կաւարտվի։ Ռուսերէն այբբենարան եւ առաջին ընթերցարան։ Ցարմար դասագիրք հայ ուսուցիչներին համար։ Շուտով լոյս կը տեսնի երկրորդ տարվայ դասընթացը։ Դիմել՝ А. Дагбашяну, Тифлисъ, Евангуловская 8 П эт.

(Ու. Կ.) 1143. 2—2

D-elle Française

cherche logement et nourriture en échange de leçons.

Excellentes recommandations. S'adresser: Бебутовская № 56, кв. Якулова.

(О. մ.) 1110. 5—5

Մամուլի տակից դուրս եկաւ
ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ Բ. տարի (պատկերազարդ)
ԸՍՏ ՆՈՐԱԳՈՅՆ ԾՐԱԳՐԻ
(Երրորդ տարին մամուլի տակ է, պատկերազարդ)
Դիմել «Գիր» գրավաճառանոց՝ Веліаминовская 7. և ի՛՛՝ Бебутовская 29.
Սահակ ա.-ք. Սահակեան

(Ա. օ.) 1141. 5—3

Золотая медаль Лондонъ 1893 г.

Главн. складъ у Г. Ф. Юргенсъ, Москва

(М. 4375) 21. 24—17

Տեղապանեն եւ ուրիշ քաղաքների լրագիրների և ամսագիրների համար յայտարարութիւններ ընդունող

ԱԳԵՆՏ
Յ. Գ. ԽԱԼԱԹԵԱՆԸ

ՓՈԽԱԴՐՎԵԼ է Սեմեոնովսկայա փողոցից՝ Կրասնոգօրսկայա փողոց, № 30.

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՈՎՆԵՐԻ

այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի պրոդաուտ ծառեր ու դէկորատիվ բոյսեր։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.).
Կատալօգն ուղարկվում է Զ Ր Ի։

(Կ. Հ.) 1068. 15—8

Ռուս լեզուի մէջ հմուտ և մարդուս առողջութեամբ

ՄԻ ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉ,

որ երկար տարիներ եղել է Կովկասում և Կովկասից դուրս հայ և ռուս դպրոցներում, ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐ պետական և հայ դպրոցների համար։
Դիմել «Մշակի» խմբագրութեան։

(Օ. մ.) 1130. 20—4

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ

„ԱՐՓԻԿ“

Այբբենարան հայախօս և օտարախօս մանուկների համար. բազմաթիւ պատկերներ և գրութեան օրինակներ։
Գինը 20 կոպ., զիջումը 20%, Դիմել «Գիր» և «Գուտտենբերգ» գրախանութներին։ Ցօրինողի հասցէն՝ Тифлисъ, Михайловскій пр. 70. Николаю Теръ-Гевондянъ.

(Օ. մ.) 1121. 5—5

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
Հիմնել ենք առևտրա-յանձնարարական և ներկայացուցչական

ԳՐՄՍԷՆԷԱԿ,

որտեղ ընդունում ենք ընդհանրապէս զանազան առևտրական և առանձնապէս թարմ և չորացրած մրգեղէնի, կօնսերվների և պիւրէների սպառման յանձնարարութիւններ։ Խնդրում ենք դիմումի հետ չը մոռանալ նմուշներ ուղարկել։
Ցարգանօք՝ Զ. Ն. ԽՐԽՐԵԱՆՑ եւ Տ. Զ. ԲԱԽՇԻՆՕՎ
Հասցէներ { С.-Петербургъ, Петербург. ст., Большой пр. 92. Тифлисъ, Елизаветинская, 192.

(Կ.) 973. 15—7

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ԲԱԿՈՒ, уголъ Красноводск. и Меркурьевск., телеф. № 10—56.

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Կուրսերում ուսանվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն հոմբիչի վրա. 2) Հաշապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագիր ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ցանկացողների համար՝ առանձին վճարով տեղացիներ և սահնագրութիւն։

Ուսումը սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7-ը։

Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և ժամերաման ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ՁՐԻԱՒՈՐ։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову.

(Չ.Կ.) 884. 20—19

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.